

والتبليغ

مجلة جمعية القاهرة الخيرية الأزمنية العامة

# ՏԵԶԵԿԱՏՈՒ



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԳԼՃԻՐԷԻ Տ.Բ.ԸՄԻՈՒԹԵԼՆ

المدير المسئول ا. صاروخان — ١٥ شارع عماد الدين — تليفون ٥٥٦٣٦

Ե. Տ Ա Ր Ի

Թ Ի Ի — 6

1961

## Մ Ա Յ Ր Ե Ն Ի Լ Ե Զ Ո Ւ

Մի ազգ մոռանալով իր մայրենի լեզուն, — կորցնում է իր բնական միջոցներին մեկը, ուրեմն կը պակասի, կը նուազի նորա բնական զարգացման, նորա անհասական յասկուրթիւնների, նորա ինքնուրոյնութեան, ուրեմն նորա՝ հասարակաց օգտի համար արդիւնաբերութեան ուժը: Եթէ Երանսացին չիմանայ Երանսերէն լեզուն, ռուսը ռուսաց լեզուն, հայը հայոց լեզուն, վրացին վրաց լեզուն, — Երանսացին չի չիմի կասարեայ Երանսացի, գերմանացին չի չիմի կասարեայ գերմանացի, ռուսը կասարեայ ռուս, հայը կասարեայ հայ ...

Կորցնելով իր մայրենի լեզուն, ուրեմն իր բնական գործիքներից (օրգաններից) մեկը, թէ ռուսը, թէ գերմանացի, թէ Երանսացի, թէ հայը կը զրկուին իրանց կազմըւածիին եւ բնաւորութեանը յասուկ ԲՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԻ ՆՇԱՆԱԻՈՐ ՄԱՍԻՑ:

ԳՐԻԳՈՐ ԱՐՄԲՈՒՆԻ

Handwritten signature and scribbles at the bottom left of the page.

Ա զ Պ

- Տեղեկատուն առ այժմ կը հրատարակուի երկու ամիսը անգամ մը.
- Թղթակցութեանց, դրամական նուէրներու, գիրքերու, թերթերու և հանդէսներու առաքումները կատարել խմբագրութեանս հասցէին՝

Խմբագրութիւն Տեղեկատուի

15, Էմատ էլ Տին փողոց

Նամակատուի 717, Գահիրէ — Հեռախօս 55636

Rédaction Déghégadou

15, Rue Emad El Dine

B.P. 717, — Le Caire — R. A. U.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

	Էջ
Ս. Մեսրոպի Դամբարանը	1
Հատուածներ Վաղգէն Ա. Կոթողիկոսի կոնդակէն	1
Մեծ Դարաղլուխը	Ժագ Սայապալեան 2
Սուրբ Մեսրոպ Մաշտոց	Գ. Պ. 3
Սուրբ Մեսրոպ (քերթուած)	Ա.ր. Յարութիւնեան 3
Օշականուս »	Սողոմոն Տարօնցի 4
Վահան Քիւրքճեան	Ա. Ալպոյանեան 6
Բարեգործականի Կեանքէն	10
Աղթամար	Յովհ. Թումանեան 10
Մարդուս Ծագումը ըստ Տարվինի	Արթին Պ. Յակարեան 14
Բարեգործ. միութիւնը և իր բարիքները	Գր. Յ. Մարգարեան 16
Սփիւռքահայ Կեանքէն	Ս.Շ. 17
Հայաստանի Չղախէժը	Ս.Շ. 18
Դաւիթի Թոռները	Յովհաննէս Շիրազ 19
Հայրենի Աշխարհ	Ս.Շ. 21
Ասղագէտ Վիկտոր Համբարձումեան	22
Գահիրէի Հ.Բ.Ը. Միութեան Յորելինակն 50 ամեայ	24

սօնակատարութիւնը և ցանկ Վեթերան Անդամներու

# تَنْبِيْهُنَا

مجلة جمعية القاهرة الخيرية الأرمينية العامة

# ՏԵՉԵԿԱՏՈՒ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԳԼՏԻՐԷԻ Հ.Բ.ԸՄԻՈՒԹԵՆԸ

المدير المسئول ا. صاروخان - ١٥ شارع عماد الدين - تليفون ٥٥٦٣٦

Ե . Տ Ա Ր Ի

Թ Ի Ի — 6

1961



ՕՇԱԿԱՆԻ ՄԷՉ, ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊԻ ԳԱՄԲԱՐԱՆԻՆ  
ՎՐԱՑԻ ԱՐՁԱՆՍԳՐՈՒԹԻՒՆԵՐԸ . —

«Յամի Տեառն 441 Փետրվար ամսի 20,  
Վահան Ամատունի իշխանն ամփոփելով  
աստ Օշական, զմարմին

Սրբոյ վարդապետին մեծին Մեսրոպբայ  
Թարգմանչին, կառուցեալ է ի վերայ  
դամբարանիս, յանուն նորա զկեղեցիս,  
զոր նորոգեաց յամին 1640 Փիլիպպոս  
Կաթողիկոս եւ ի վերջումն յամին 1875

նորոգեաց Գէորգ Դ. Կաթողիկոսն  
տրօք ժողովրդեան հայոց Երեւանայ  
եւ այլ վիճակացն Ռուսաստանի:  
Իսկ զտապանս կանգնեաց ի յիշատակ  
Կ. Պոլսեցի Անդրէաս Արքեպիսկոպոսն  
յամին 1882 եւ հայոց ՌՅԼԱ»:

ՀԱՏՈՒԱԾՆԵՐ ՎԱԶԳԷՆ Ա. ՎԵՀԱՓԱՌԻ  
ԿՈՆԴԱԿԷՆ, ՆՈՒԻՐՈՒԱԾ ՀԱՅ ԳԻՐԵՐՈՒ  
ԳԻՒՑԻ 1600 ԱՄԵԱԿԻՆ:

... Մեսրոպ վարդապետ Մաշտոց  
գտաւ եւ թիրեղի վերածեց հայ ժո-  
ղովուրդի խօսած լեզուի հնչիւնները,  
յօրինեց անոնց նշանագրերը եւ Սա-  
հակ Պարթեւ Հայրապետի հետ  
Թարգմանեց Սուրբ Գիրքը: Եւ մեծ  
Վարդապետը իր լոյս ձեռքով գրեց  
առաջին Հայ տառերը՝ «Ճանաչել ի-  
մասսութիւն եւ զխրատ, իմանալ զբանս  
հանճարոյ» (Առակք. Ա. 2), Սուրբ էջ-  
միածնի կամարներուն տակ:

Մեսրոպ վարդապետ հիմը դրաւ  
հայ դպրութեան եւ գրականութեան:  
Հայաստանեայց Եկեղեցին եւ  
ժողովուրդը զայն հռչակեցին ՍՈՒՐԲ:

... Սուրբ Մեսրոպ հայ ժողո-  
վուրդին գիր եւ գիրք տալով, դար-  
ձաւ աշխարհի մշակոյթ ստեղծող  
լուսաւոր ուժերէն մէկը, վասնզի հայ  
ժողովուրդը իրեն տրուած այդ մեծ  
շնորհը զիտցաւ արգասաւորել, հա-  
րըստացնել ու ծաղկեցնել եւ հասնիլ  
գրական ստեղծագործութեանց բարձր  
կատարներու:

... Սուրբ Մեսրոպի գործով հայ  
ժողովուրդը իր ինքնութիւնը գտաւ, իր  
մտքի զգացումի կաղապարները ձուլեց

եւ յօրինեց իր ապրելու եւ ստեղծագործելու ոճը:

Մեր ազգային ամբողջ մշակոյթը իր բոլոր վաւերական արժէքներով՝ գրականութեան, Եւրոպայականութեան, գիտութեան եւ արուեստներու մէջ, սկիզբ կ'առնէ Ս. Գրիգոր Լուսաւորչի եւ Ս. Մեսրոպ Մաշտոցի տեսիլքներէն: Այդ ոգեկան աղբիւրներէն է, որ բուն հայ ժողովուրդը ծնաւ իր հոգիով, իր իմացականութեամբ, իր զգայնութեամբ, իր պատմութեամբ, իր մշակոյթով:

...Ս. Մեսրոպ այսօր ամենակենդանի հայն է: Ան կ'ապրի մեր վերապրող ու վերածնած ժողովուրդի սրտին մէջ եւ շրթներուն վրայ, Հայրենի աշխարհի փերէն մինչեւ հեռուները հայ Սփիւռքին:

Սուրբ Մեսրոպ կ'ապրի մանաւանդ ու կը գործէ մեր արդի վերաշինուած կտորին տակ, քաղաքամայր Երեւանի Մատենադարանի կամարներուն ներքեւ, Հայաստանի եւ դպրութեան բազում հաստատութիւններու մէջ:

Հայ հաւատքի վէմ Ս. Էջմիածնէն եւ երախտագէտ հայ ժողովուրդի սիրտէն՝ յարգանք եւ օրհնութիւն սքանչելագործ Սուրբ Մեսրոպի յիշատակին եւ անոր անմահ գործին:

Յարգանք եւ փառք եւ օրհնութիւն նաեւ հայ ժողովուրդի կեանքին եւ վերածնունդին, անոր ապրելու կամքին եւ ստեղծագործ անսպառ ուժերուն:

Թող մեր Հայրերու Աստուածը միշտ պաւստաւ պահէ լուսեղէն դափնեպսակը Ս. Մեսրոպին եւ միշտ կենդանի, խաղաղ ու ապահով պահպանէ հայ ժողովուրդը եւ անոր Մայր երկիրը նուիրական:

Եւ թող Աստուած իր ջնորհները նոյն առատութեամբ բաշխէ մեր Լեզգին, որպէսզի ան յաղթականօրէն շարունակէ իր առաքելութիւնը այս աշխարհի վրայ, միւս ժողովուրդներու կողքին, իր զաւակներուն հանճարով հարստացնելով մշակութային գանձարանը համայն մարդկութեան:

...Հայ ժողովուրդ, միշտ կենդանի եւ միշտ փառքի մէջ պահէ քու մեծասքանչ մայրենի լեզուդ եւ գիրդ Մեսրոպեան:

Վ.Ա.ՁԳԻՆՆԵՍ Ա.

Էջմիածին Ծայրագոյն Պատրիարք եւ 1961 Կաթողիկոս Ամենայն Հայոց

# Մ Ե Թ Դ Ա Ր Ա Գ Լ Ո Ւ Խ Ը

Մարդկութիւնը կը քսւլէ, դարերէ ի վեր կը քսւլէ այն ճամբուն վրայէն որուն անունը, «կեանք» են դրեր, և որուն անտեսանելի ծայրին վրայ հեռուէն, շա՛տ հեռուէն երեւցող հարցական նշանը —, վիթխարի Սփիւնքս, — այնքս՛ն կը նմանի վերջակէտի:

Հարթ ու միօրինակ պողոտայ մը չէ ան, այլ, աւելի կամ նուազ հեշտին, աւելի կամ նուազ տաժանելի ուղիներ՝ որոնց վրայէն կ'երթան ազգերն ու ժողովուրդները, ելլելով կամ իջնելով, հեւալով կամ ժպտելով — երբեմն զուգահեռական գնացքի մը խաղաղ ընթացքովը Բրքելով իրարու հետ, բայց շատ անգամ ալ զիրար խաչաձեւելով, ճամբուն վրայ իրարու բախելով և զիրար գլխու անցնելու համար արիւնոտ կռիւներ մղելով:

Այդ պայքարները, այդ կռիւները սովորական հանգրուաններն են մարդուն՝ ուրկէ մարդկութիւնը կը քսւլէ դարերէ ի վեր ու դեռ դարերով պիտի քսւլէ:

Իսկ անսովոր, մեծ հանգրուանը, ազգի մը համար, այն դարագլուխն է ուր իր ազատագրումին կօթողը կը կերտուի:

\*\*\*

Ազգերու պատմութեան մեծագոյն դարագլուխները նկատուած են քաղաքական ազատագրումները: Սակայն քաղաքական ազատագրումը և քաղաքական մեծութիւնը կը նմանին անհատներու նիւթական հարըտութիւններուն, ունենալով՝ անոնց պէս՝ անկումներ ու ելեւէջներ: Ենթակայ ըլլալով՝ անոնց պէս՝ կորսուելու վտանգին: Մինչդեռ մտքի ազատագրութիւնը այն զանձն է որ ենթակայ չէ բաղդի քմահաճոյքին, որովհետեւ ոչ թնդանօթի անիւներուն տակ կը ճգմուի, ոչ սուրով կը մեռնի և ոչ ալ գերութեան շղթաներուն տակ կը խամրի:

Օճաբարդի անկումէն յետոյ ի՞նչ մնաց մեծ բանակներու աշխարհացունց բանակներէն՝ որոնց համար քանի մը սերունդ-

ներու աճիւնները ցանուեցան Եւրոպայի մէկ ծայրէն միւսը և մինչեւ Ասիոյ իրոքերը, Թուսիոյ սառնադաշտերուն ու Եգիպտոսի աւազուտ անապատներուն մէջ :

Մինչդեռ, Արեւ - Արքայի օրով ազատաբարուած Ֆրանսական միտքը, Ֆրանսայի քաղաքական ամերէն ինկած շրջաններուն իսկ չդադրեցաւ իր տիրապետութիւնը տարածելէ ազգերուն ու ժողովուրդներուն վրայ :

\* \* \*

Եթէ քաղաքական ցախողուածներու և դժբախտութիւններու անվերջ ու աներեւակայելի շարքէ մը ետքը այսօր Հայ ազգ մը գոյութիւն ունի տակաւին, ոչ թէ անոր համար է որ Հայկերու, Արամներու կամ Արտաշէսներու աւելի կամ նուսզ անասելական մեծութիւնները կամ Տիգրանի մը՝ Հռոմէական պետութեան դէմ մղած իրապէս հերոսական պայքարները արձանագրուած են մեր պատմութեան մէջ, այլ որովհետեւ զանուած են հոն Սահակ մը և Մեսրոպ մը, որոնք իրենց իտէալ ըրած են այս ազգին մտքի ազատագրումը և իրենց ամբողջ կորովը, ամբողջ ուժը, ամբողջ կեանքը նուիրած են այդ իտէալին :

Բևախօսական սովորական պայմաններու ծնունդը չեն այդ տեսակ դէմքերը, միայն իրենց հօրն ու մօրը զաւակները չեն աշունք : Յեզին ոյժը, իր պահպանութեան բնազդին ճնշումին տակ դարեր ու դարեր խտանալով ծնունդ սուած է այդ հսկաներուն, որոնք իրենց տիտանեան ձեռքով Հայ ազգին թեւերէն բռնած ու քանի մը դար առաջ մղած են զայն :

Սահակի և Մեսրոպի ձեռքով վառուած փարոսին լոյսը, հազար հինգ հարիւր տարիներու փոթորկալից և խաւարամած անջըրպետին մէջէն հասած է մեզի ու պիտի հասնի մեր յաջորդ սերունդներուն ալ :

Իանի դարերը հօլովուին, Հայ ազգը իր աչքերը պիտի դարձնէ այդ լոյսին և իր յարգանքը պիտի մատուցանէ իր մտքի ազատագրումը նուիրագործող հերոսներուն, հանգրուանէ հանգրուան, այն ճամբուն վրայ ուրկէ կը քալէ մարդկութիւնը :

Ժ. Լ. Գ. ՍԱՅԱՊ ԼԼԵԱՆ  
(Փայլակ)

# Սուրբ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ

Հայ գիրերու հեղինակ և հայ գրականութեան հիմնադիր Սուրբ Մեսրոպ Մաշտոց Տարօնի Հացեկաց գիւղէն Վարդան անուն գիւղացիի մը զաւակն էր : Անոր ծննդեան ճշգրիտ թուականը յայտնի չէ, սակայն հաւանական նկատուած է 361ը որ այսօր պաշտօնապէս ճանչցուած է որպէս Մ. Մեսրոպի ծննդեան թուական :

Ս. Մեսրոպի գործունէութեան մասին մեզի հասած են գրաւոր տեղեկութիւններ : Իր աշակերտն ու գործակիցը ԿՈՐԻԻՆ, ունի գործ մը՝ ՎԱՐԻ ՄԱՇՏՈՅԻ, ուր ընդարձակ կերպով իր խօսի Մաշտոցի քարոզչական և կրթական գործունէութեան մասին : Թէ՛ Մեսրոպ ո՞ւր ստացած է իր կրթութիւնը, պատմութիւնը լուռ է, բայց այն փաստը թէ ան ԽՈՍՐՈՎ Գ. Արշակունի թագաւորին օրով ( 383 - 389 ) Վաղարշապատի Հայոց Արքունիքին մէջ կը վարէր գիււանադպրի պատասխանատու պաշտօնը, ինքնին կը հակցուի որ Մեսրոպ ստացած էր

## ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

Երանելի՛ն՝ մեծակեաց մ'եր նորաի,  
Հոգի՛ն՝ ազաւ անցաւորին պայմանեց,  
Եւ անձնատուր Երազի մը տարօրե՛ն՝  
Որ մեծութեան անկիւնին մեզ կը փթթի :

Տըւայտան մը՝ խոր, անբախտ կարօսի  
Մեծաւորին կը պրկէր սրբն ու թգօրե՛ն .  
Պիտի գրքե՛ր, երբ գար օրնորն հրեղե՛ն,  
— Պայծառ բըղխում՝ աւուածային ոլորտի :

Եւ աղօթքի պահու մը մեզ վերաւաց,  
Հօգուոյն պայծառ ամեցատես աչե՛րն՝ բաց,  
Տեսաւ օտրանն հրաւանդակ տառերուն . . .

Ու դարե՛ր վերջ՝ զրպիւր միակ անցրեան,  
Այդ նիւթով թեւ կուտայ իր ներե՛նդման,  
Սուրբին ձօնուած իր այս տաղովն անանուն :

### ՕՇԱԿԱՆՈՒՄ

Այսեղ հանճա՛րն է հանգչում, յաւերժական լոուքի՛ւն՝  
 Ընկղմած խոր լոուքեան ժամանակի մեջ անձայր:  
 Մեսւո՛ւպ, արտի հո՛ւր կանթեղ, մտի անգո՛ւլ արթնութիւն,  
 Մեք դպրութեան հգօր Հա՛յկ, ժողովուրդիս պէս պայծառ:

Այս պաղ, անդորր մատուում՝ միայն յաւերժմն է արթուն —  
 Հսկում էեզ, Մե՛ծ Ընթերցող, հսկայ պապրդ ոսկեբառ.  
 Բայց բաբախում ես դու յար ե՛ւ ծերունու հին արտում,  
 Ե՛ւ մանկան նոր արտի մեջ — արեւի պէս մտալառ:

Ահա մի ողջ սքնաջան եւ փաշասի՛րս ժողովուրդ,  
 Ուպէս երկինք, տանում է քո արեւը դար ի դար, —  
 Քո լոյսի հետ, լոյսի՛ց մեջ, — մի սերունդից մի սերունդ:

Հանդի՛ւս էեզ, օ՛, բանի սիրս, մտի սե՛ր եւ մխիթար,  
 Ահաւասիկ քո արտով ու քո մտով մտաբոց՝  
 Երկե-երկիր է թելում հանճարեղ հուրը Հայոց:

ՍՈՂՈՄՈՆ ՏԱՐՈՆՑԻ

Բարձր կրթութիւնն և հմուտ էր ասորերէն, յունարէն և պարսկերէն լեզուներուն: Որոշ շրջան մը Արքունիքին մէջ գիւտանադպրութեան պաշտօնը վարելէ յետոյ կ'անցնի զինուորական ծառայութեան մէջ ուր կը մնայ մինչեւ 391 թուականը:

Այդ շրջանին Հայաստան ալիկոծութեան մէջ էր: Երկիրը բաժնուած էր երկու մասերու, Բիւզանդական կամ Արեւմտեան Հայաստան և Պարսկական կամ Արեւելեան Հայաստան: Բիւզանդական մասին մէջ հայկական թագաւորութիւնը ջնջուած էր փոխարինուած կուսակալներով, որոնք երկիրը կը կառավարէին Կ. Պոլսէն իրենց ստացած հրահանգներուն համաձայն: Պարսկական Հայաստանի մէջ սակայն Արշակունեաց թագաւորութիւնը դեռ կը շարունակէր իր գոյութիւնը պահել և ենթակայ էր Պարսից Արքայից Արքային: Հայերը թէեւ իրենց ուրոյն լեզուն ունէին, բայց սեփական նշանագիրներ չունենալով ստիպուած էին օտար (ասորերէն, պարսկերէն և յունարէն) լեզուներով գրականութիւն մշակել:

Այս ձեւով հայ ազգը ուշ կամ կանուխ ենթակայ էր կորսուելու վտանգին:

Յոյները քրիստոնէութեան նոր յարած,

արդէն դարձած էին մոլեռանդ յունադաւաններ և կ'ուզէին յունական մշակոյթի գծով յունադաւանութիւնն պարտադրել իրենց նուաճած երկիրներու այլատարր բնակչութեան, ինչպէս էր օրինակ հայոց պարագան: Ինչպէս ըսինք, անոնք չնչած էին հայոց պետականութիւնը և երկիրը կը կառավարէին Պոլսէն ղրկուած կուսակալներով, զայն վերածելով բիւզանդական գաւառի մը: Ամէն կողմ հէլլենականութիւնը տարածուելու վրայ էր: Հայ եկեղեցիէն ներս արդէն յունարէն և ասորերէն լեզուներով պաշտամունք տեղի կ'ունենար, իսկ աւելորդ է ըսել թէ, բիւզանդական Հայաստանի մէջ՝ բոլորովին յունարէն լեզուով: Պարսկական Հայաստանի մէջ շատ աւելի գէշ էր վիճակը, հոգ չէ թէ պահուած էր հայկական թագաւորութիւնը: Պարսիկները, որոնք մոլեռանդ կրակապաշտներ էին, չէին հանդուրժեր որ իրենց ենթակայ քրիստոնեայ հայերը իրենց նոր կրօնքին մէջ յարատեւէին, այլ կ'ուզէին որ վերադառնան իրենց նախկին հեթանոսական կրօնքին, որ պէտքի իրենց դրացի և երբեմնի կրօնակից հայ ժողովուրդը բիւզանդական ազդեցութեանց չենթարկուէ: Միակ փըր-



կուսակցութիւնը կը կայանար ուրեմն հայ մշակոյթը զարգացնելու և զայն սիրելի դարձնելու մէջ, որպէսզի կարելի ըլլայ ապահովել հայութեան գոյատեւումը, փրկելով այսպէս Հայ եկեղեցին և հայ ընտանեկան յարկը օտար լեզուներու տիրապետութենէն, օտար մշակոյթի ազդեցութենէն: Հայ լեզուն գոյութիւն ունէր բայց գիր չկար, իսկ հայերէն գրականութիւն ստեղծելու համար ամենէն կենսականը այս պահասը լրացնելու մէջն էր: Երկուքի բաժնուած հայութիւնը միացնելու համար հայկական մշակոյթի տարածման պէտքը կար ինչ որ կարելի էր իրագործել հայերէն լեզուով ու հայ գիրերով գրուած գրականութեամբ: Այս պահանջը կենսական էր, և զայն առաջին անգամ զգացողը ու անոր դարմանը մտածողը և աշխատողը եզաւ Մեսրոպ Մաշտոց:

Փրոֆ. Մանուկ Աբեղեան, իր «Հայոց Հին Գրականութեան Պատմութիւն» երկհատոր գործին մէջ սապէս կը ներկայացնէ Մաշտոցի սկզբնական գործունէութիւնը.—

«Առաջին մարդը որ հոգացել է հայերէն գրի ու գրականութեան կամ ինչպէս այն ժամանակ ասում էին, դրպութեան մասին, է Մեսրոպ Մաշտոցը: Նա հիմք է դրել հայ գրականութեան և հայերէն լեզուով դպրոցի ժամանակի տնտեսական, դաստիարակչային և քաղաքական պայմաններն էին առաջ բերել գրի ու գրականութեան անհրաժեշտութիւնը: Մաշտոցն ի հարկէ իր ժամանակի ծնունդ էր և բնականաբար նա մենակ չի եղել իր գործունէութեան մէջ: (անդ՝ էջ 23):»

Մեսրոպ Մաշտոց հայերէն գիրերու պէտքը շատոնց զգացած էր: Իր պատանեկութիւնը և երիտասարդական սկզբնական շրջանը անցուցած էր Բիւզանդական Հայաստանի մէջ ուր ստացած էր նաեւ իր կրթութիւնը: Կացութեան գիտակից ըլլալէ ետք, անցած է Արեւելեան կամ Պարսկահայաստան ուր մեր ժողովուրդին կ'սպասէր միեւնոյն դժբաղդ ճակատագիրը՝ կորուստեան, ձուլման վտանգը: Եւ փափաքելով ամբողջովին նուիրուիլ իր ժողովուրդի

փրկութեան գործին, Մաշտոց հոգեւորական ասպարէզը որդեգրեց (391): Շնորհիւ իր ձիրքերուն և մտաւոր կարողութեան, շուտով եպիսկոպոսական աստիճան ստացաւ (392) և որպէս շրջուն քարոզիչ անցաւ Գողթն գաւառը քարոզչական և ուսուցչական պաշտօններով: Ինչպէս յայտնի է, Հայաստան քրիստոնէութիւնը նոր ընդունած էր, ու տակաւին շատ մը գաւառներ դեռ կը մնային հեթանոսական կրօնքին կապուած: Էջմիածինէն զրկուած քարոզիչներ, քաղաքէ քաղաք և գիւղէ գիւղ կը շրջէին ու նոր կրօնքը կը քարոզէին: Ահա այս նուիրական աշխատանքին նուիրուողներէն մին եղած է Մեսրոպ Մաշտոց:

Ան, իր այս շրջապայութեան ընթացքին կը տեսնէ օտար մշակոյթի անաւոր ազդեցութիւնը հայկականութեան վրայ: Վերադարձին, Վաղարշապատի մէջ Սահակ Պարթեւ հայրապետին և Վառմաշապուհ թագաւորին կը պարզէ տիրող կացութիւնը: Ու այդ ժողովին մէջն է որ կը մտածուի ՀԱՅԵՐԷՆ գիրեր ստեղծելու մասին: Լըսուած ըլլալով որ Աղձնիքի մէջ Դանիէլ անուն եպիսկոպոս մը հայերէն գիրեր հնարած է, մարդ կը զրկեն անոր մօտ ու Վաղարշապատ բերել կուտան այդ նշանագրերը (406):

Դանիէլեան նշանագրերը ստանալէ ետք, Մեսրոպ աշակերտները կը հաւաքէ ու կը փորձեն հայերէն գրել: Կարդալ ուսուցանել այդ նշանագրերով: Որս ժամանակ մը փորձելէ յետոյ, կը տեսնուի որ Դանիէլեան նշանագրերը պակասաւոր էին ու չէին լրացնէր հայ լեզուի հնչականութեան բոլոր պէտքերը: Կը ստիպուին դասերը դադարեցնել ու աշակերտները ցրուել: Մեսրոպ կ'անցնի Միջագետք և Ամիթի ու Եղեսիոյ մէջ յոյն և ասորի հմուտ լեզուագէտներու աշակցութիւնը կ'ապահովէ: Վերջապէս Դանիէլեան նշանագրիները ամբողջացուցած կը վերադառնայ Վաղարշապատ:

Հայերէն գիրերու գիւտի թուական ընդունուած է 412ը, որուն վրայ հիմնուելով, 1912ին պաշտօնապէս տօնուանցաւ գիրերու Գիւտի 1500 ամեակը՝ ի սփիւռս աշխարհի (1912-1914): Մեսրոպ Պարսկահայաստան վերադարձին՝ կը բանայ բազմաթիւ դպրոցներ ու իր պատրաստած աշակերտները Հայաստ-

տանի չորս կողմը կը տարածեն հայերէն լեզուն և գրականութիւնը:

Պարսկահայաստանի մէջ իր գործերը կազմակերպելէ ու գիտակից ձեռքերու յանձնելէ ետք: Ան կ'անցնի բիւզանդական, այսինքն Արեւմտեան Հայաստան, հոն եւս իր հայրենաշէն ծրագիրները իրագործելու համար:

Բիւզանդական իշխանութիւնը արգելք կ'ըլլայ Մեսրոպի գործունէութեան. թոյլ չեն տար որ հայ լեզուի ուսուցման համար հայ դպրոցներ բացուին: Մեսրոպ, առանց վհատելու, իր ծրագիրը հետապնդելու համար կ'անցնի Կ. Պոլիս, կը դիմէ Թէոդոս կայսեր, և կը յաջողի անհրաժեշտ արտօնութիւնը ստանալ (425—26):

Արեւմտեան Հայաստանի մէջ եւս իր առաքելութիւնը գլուխ հանելէ վերջ կը վերադառնայ Սահակ Պարթեւ հայրապետի մօտ: Իր համբաւը կը տարածուի հեռաւոր երկիրներ: Հայաստանի դրացի վրացիներն ու աղուաններն ալ իրեն կը դիմեն, իրենց լեզուին յարմար գիրեր ձեռք բերելու համար: Մեսրոպ, հայոց դաւանակից այդ ժողովուրդներուն համար ալ գիրեր կը ստեղծէ ու այսպէսով օգտակար կ'ըլլայ անոնց:

Էջմիածնի մէջ, Սահակ Պարթեւ Կաթողիկոսի հովանաւորութեամբ Մեսրոպ Մաշտոց կը ձեռնարկէ Հին և Նոր Կտակարաններու և այլ կրօնական գիրքերու թարգմանութեան գործին: Այս նուիրական աշխատանքին իրենց գործակցութիւնը կը բերեն Մաշտոցի բազմաթիւ աշակերտները, որոնց շարքին՝ Կորիւն, Եզնիկ, Խորենացի, Եղիշէ, եւ այլն, որոնք գրած են ինքնագիր գործեր ալ:

Մեծ և բազմակողմանի եղած է Ս. Մեսրոպի կեանքը: Անոր կը վերագրուի ՅԱՆՃԱԽԱՊԱՍՏՈՒՄ անուն քարոզչութեան գիրք մը. դարձեալ ինքն է որ դասաւորած և ամբողջացուցած է Հայաստանեայց Եկեղեցոյ Միակատարութեանց գիրքը, որ իր անուանով կը կոչուի ՄԱՇՏՈՑ:

Իր աշակերտները գրած և թարգմանած են բազմաթիւ գործեր, աշխատած են ազգին լուսաւորութեան և Հայ Եկեղեցոյ պայծառութեան համար: Եւ շնորհիւ իրենց այս անձնուէր գործունէութեան, ծաղկած է մեր գրականութիւնը, թարգմանուած Աս-

ԱՆՀԵՏԱՑՈՂ ԴԷՄՔԵՐ

ՎԱՀԱՆ ՔԻՒՐՔՃԵԱՆ

16 Նոյ. 1863 — 30 Հոկտ. 1961

Գրեց Ա. ԱԼՊՅԱՆԵԱՆ

Վահան Քիւրքճեան կը մեռնի գրեթէ մէկ դարու կեանքով և իր ետին կը ձգէ բեղմնաւոր և արդիւնաւոր կեանքի մը և գեղեցիկ գաղափարներ յղացող միտքի մը յիշատակները:

Ան ապրած է մեր ազգին ամենէն փոթորկոտ և աղիտալի օրերուն, և այդ յուզումներուն մէջ եղած է մեր ամենէն հեռատես, խոհեմ և իրատես գործիչներէն մէկը, և հակառակ նիւթական միջոցներ չունենալուն՝ սոսկ բարոյական ուժերով կրցած է մեր ազգին մեծազոյն բարերարներուն չափ արդիւնաւէտ գործերու նեցուկ և սատար հանդիսանալ ու թողուլ գործ մը՝ որ երբեք պիտի չմոռացուի:

Իր ամենէն կարեւոր և անմոռանալի գործը պիտի մնայ Հ. Բ. Ը. Միութեան գա-

տուածաշունչը որ կոչուած է Թագունի թարգմանութեանց, և վերջապէս մեր լեզուն ճոխացած, նրբացած և հարստացած է ու դարձած աշխարհի ամենէն կատարեալ լեզուներէն մին: Ահա թէ ինչու Մեսրոպի այդ ժամանակաշրջանը կը կոչուի ՈՍԿԵՂԱՐ:

Սուրբ Մեսրոպ Մաշտոց վախճանած է 440 ին, մօտաւորապէս 80 տարեկանին, ապրելով օգտաշատ կեանք մը և ձգելով անմոռաց յիշատակ մը:

Թագունած է Էջմիածնի մօտ, Օշականի մէջ, ուր իր դամբարանին վրայ կանգնած են եկեղեցի մը. որ մեր շինարար Վազգէն Հոյրապետին ջանքերով և Հայաստանի կառավարութեան օժանդակութեամբ վերանորոգուած է: Ս. Մեսրոպի դամբարանը գտնուելու յարմարութեամբ կը կոչուի հայ ժողովուրդին, և աշխարհի չորս ծագերէն հազարաւոր հայեր ամէն տարի ուխտի կուգան իրենց յարգանքի և երախտագիտութեան տուրքը մատուցանելու Հայութեան մեծ Սուրբին:

Գահիրէ

Գ. Գ.





Վ Ա Լ Ա Ն Մ. Ք Ի Ի Ր Ք Ճ Ե Ա Ն

ղափարին սերմնացաններէն մէկը ըլլալու պատիւը:

Վահան Քիւրքճեան, Միութեան գաղափարին ո՛չ միայն յղացողներէն և մարմնաւորութեան նպաստողներէն մէկը այլ անոր ամրապնդման և տեւականացման մեծ գործաւորը եղած է զայն Ամերիկայի մէջ հիմնարկելով:

Եթէ Հ.Բ.Ը. Միութիւնը մինչեւ 1914 Ամերիկայի մէջ տեղաւորուած չըլլար, շատ հաւանօրէն չպիտի կարենար կատարել այն դերը՝ որ ան կատարեց Առաջին Համաշխարհային պատերազմին ու անոր յաջորդող դժուար ժամանակամիջոցին մէջ. իբր կազմակերպուած համազգային Մարմին մը, հնար եղածին չափ օգնութեան ձեռք կարկառելով ազգին բեկորներուն և անոնց վերականգնութեան ու տեղաւորման գործին նպաստելով, մասնաւորապէս Ամերիկայի Հայ Գաղութիւն առատաձեռն նուիրատուութիւններով:

Իր այս մեծ ծառայութեան հետ պէտք է յիշատակել թէ ան, առաջիններէն մէկն է որ Հայ Յեղափոխութեան գաղափարը շահագործող խմբակներու դէմ ծառայողներէն եղած է, այն օրերուն, ուր ամէն Հայ, յանուն Հայ Յեղափոխութեան կ'երդնուր,

ոմանք իրապէս անշահխնդրօրէն և անձնազոհութեամբ, և միւսները պարզապէս Յեղափոխութեան գաղափարական գործը խանութպանութիւն դարձնելով, դրամ չահելու համար մինչեւ մարդասպանութեան յանդգնելով:

Միայն այս երկու ծառայութիւնները պիտի բաւէին ազգին մեծագոյն բարերարներուն մէջ դասելու զինքն, առանց նկատի ունենալու իր, իբր մտաւորական, իբր կրթական մշակ, իբր գրչի մարդ և հեղինակ՝ իր ծառայութիւնները, որոնք երբեք արհամարհելի չեն:

Իր կեանքը լուսաբոյն և իսկական հայու նուիրուածը եղած է ազգին համար, որուն իր ծառայութիւնները արամադրած է անվերապան:

Կարելի չէ մասնաւորապէս զլանալ իրեն, Հայոց ժամանակակից Պատմութեան, ինչպէս նաև հայ ազգային ամենամեծ և ամենաօգտակար կազմակերպութեան՝ Հ.Բ.Ը. Միութեան կեանքին և գործունէութեան մէջ կարեւոր դեր մը կատարած ըլլալը, իր անուանակից Վահան Մալէգեանի հետ: Վահան Քիւրքճեան, իր կեանքը իր գրիչով ներկայացնելէ զատ, աւանդ ձգած է պատմական վաւերագիրներ, որոնք հրատարակութեան տուած է և որոնք շատ յաճախ հետաքրքրական իրողութիւններ երեւան կը հանեն:

Հետաքրքրուողներուն յանձնարարելով որ հետամուտ ըլլան և կարգան այդ գրութիւնները, իր բեղումնաւոր և երկարատեւ գործունէութեան մասին, որքան կարելի է համառօտիւ ներկայացնելով պիտի ջանամ իր կեանքի գլխաւոր գիծերը տալ այս տիպար և պատուաւոր հայ մտաւորական գործիչին:

Ծնած է 16 նոյ. 1863 ին Հալէպ, և տակաւին երեսայ՝ փոխադրուած է Այնթապ, հայ կրթական կարեւոր կեդրոն եղող քաղաքը, ուր առած է իր նախնական կրթութիւնը հայ վարժարաններու մէջ, իսկ երկրորդական կրթութիւնը՝ տեղւոյն Ամերիկեան Գոլէճին մէջ:

Իր առաջին զբաղումը եղած է ուսուցչութիւնը և առաջին պաշտօնը՝ Այնթապի Վարդանեան վարժարանի տեսչութիւնը:

Ուսուցչական ասպարէզի մէջ կատարելագործուելու համար ան անցաւ Լոնտոն, ուսումնասիրելու համար Անգլիոյ կրթական դրութիւնը և հետեւեցաւ վարժապետանոցի մը դասընթացքներուն: Հիւանդանալով, վեց ամիսէն դարձաւ Թուրքիա և Միացեալ Ընկերութեան կողմէ քննիչ զրկուեցաւ Կիլիկիոյ վարժարաններուն: Այն թապի մէջ վերակուցուեցաւ Վարդանեան վարժարանի տեսչութեան: Կառավարական խտտութիւններու պատճառով թողուց ուսուցչական ասպարէզը և ոստում ընել փորձեց ղէպի առեւտրական կեանք Կ. Պոլսոյ մէջ, ուր հաստատուիլ ուզեց ու այդ նպատակով 1892 ին Երուսաղէմի ճամբով գնաց Այնթապ, իր ընտանիքը Կ. Պոլիս փոխադրուելու համար:

Այնթապի մէջ ոստիկանութիւնը զինք հալածել սկսաւ և այս պարագան մղեց զինքը ազատ երկրի մը մէջ ապրելու, ուստի 1893 Մայիսին անցաւ Լոնտոն և առեւտրական օտար ընկերութեան մը ներկայացուցիչը եղաւ: Գործով Կ. Պոլիս գրանուած ատեն քիչ մնաց որ ձերբակալուէր:

Լոնտոն դառնալով, հետեւեցաւ Լոնտոնի Պրիթի Միւզիքմի մատենադարանին մէջ հայագիտական ուսումնասիրութեանց, միեւնոյն ատեն թուրքերէնի դասեր տալով անգլիացի պաշտօնակալներու:

Քիչ ետքը, իրեն համար հին երազ մը եղող Կիպրոսի մէջ հայկական մշակութային վառարան մը հիմնելու աշխատեցաւ, Մինաս Չերազի և Կ. Գ. Կիւլպէնկեանի հետ ու Իզմիրիան Պատրիարքի յանձնարարականով շրջեցաւ Մարսիլիա, Փարիզ, Ազեքսանդրիա և Գահիրէ ու այս տեղերէն համակիրներ գտաւ իր գաղափարին:

1 Փետր. 1897 ին հասաւ Կիպրոս, ուր հիմնեց 40 ուսանողի համար — մեծ մասը 1895—96 ի ջարդերէն որքացած մանչեր — Կրթական Որբանոցը, որ իր տնօրէնութեան տակ շարունակուեցաւ երեքուսն հասոյթներով:

Վահան Քիւրքճեան, իր մեծ նպատակին ձգտելու աշխատանքը առաջ տարաւ, զըպրոցին մէջ հիմնելով տպարան մըն ալ, ուրկէ գիրքեր հրատարակուեցան. ինչպէս, 1903 ին «Լուսաբեր» գրական հաւաքածոն, ի յիշատակ Էջմիածնի 1800 ամեակին և

«Կիպրոս Կղզին», 1904 ին, «Մի Տեսութիւն Հայկական Կիլիկիոյ Իշխանութեան վրայ» գիրքը, երեքն ալ իր կողմէ պատրաստուած:

- Կիպրոսի Որբանոց - Կրթարանին փակումէն ետք եկաւ Գահիրէ և 1 Դեկտեմբեր 1904 ին սկսաւ հրատարակել «Լուսաբեր» երկօրեայ թերթը, ուր ջատագուցել սկսաւ.
  - ա) Դադրեցնել քաղաքական ցոյցերը ու ահաբեկչական արարքները,
  - բ) Հիմնել Հայկական Միութիւն մը:

Ինքն ու իր գաղափարակիցները (թիւ լով 14 հոգի) 26 Հոկտ. 1905 ին հիմը դրին Հայկական Միութեան և սկսան անդամագրութեան: Պողոս Փաշա Նուպար, ընդ առաջ երթալով իրեն եղած ինդրանքի մը՝ հաւանեցաւ գլուխ կանգնիլ Հայկական Միութեան որ, 15 Ապրիլ 1906 ին առաւ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն անունը:

Քիւրքճեան, 1905 ին տնօրէն եղաւ Գալուստեան Ազգ. Վարժարանի, «Լուսաբեր» ի խմբագրութիւնը յանձնելով Արփիար Արփիարեանի, որ սկսուած պայքարը շարունակեց յեղափոխութեան անունով գործուող ոճիւրներուն դէմ, և ատոր համար իսկ զոհուեցաւ 11 Փետր. 1908 ին: Քիւրքճեան, տեսնելով իրեն ալ սպառնացող վըտանքը, 1906—1907 դպրոցական տարեշրջանը լրացնելէ ետք անցաւ Ամերիկա, ուր հետեւեցաւ Պոսթոնի Համալսարանի Օրէնըսգիտական դասընթացքներուն և վկայուեցաւ 1911 ին և քիչ ետք Պոսթոնի Օսմանեան հիւպատոսարանին թարգմտն նշանակուեցաւ:

Իր կեանքին ամենէն նշանակելի գործունէութիւնը սկսաւ Ամերիկայի մէջ, Բարեգործականի գործունէութեան տարածման բրորականտով:

Բարեգործականի Ամերիկայի անդրաունիկ Մասնաճիւղը 1909 ին հիմնուեցաւ Պոսթոն, ուր Քիւրքճեան հրատարակեց «Հայ» ամսագիրը, նպատակելու համար Միութեան ծաւալումին և մանաւանդ Կիլիկիոյ կոտորածին աղէտալիներուն օգնելու գործին:

Երկու տարի ետք, մասնաւորապէս իր ջանքերով Ամերիկայի Մասնաճիւղերուն գումարը հասած էր 60 ի, որոնց ներկայա-

ցուցիչներէն կազմուած Ամերիկայի առաջին համաժողովը 1912 ին ընտրեց Ամերիկայի Երջանային առաջին Յանձնաժողովը:

Քիւրքճեհան, իբր պատգամաւոր, երեք անգամ մասնակցեցաւ Միութեան Ընդհանուր Ժողովներուն, Գահիրէ, Լոնտոն և Փարիզ: 1921 ին, Ընդհ. Ժողովին կողմէ Պատուիրակի պաշտօնով այցելեց Կիլիկիա, Սիւրիա, Պաղեստին և Իրաք, ու վերադարձի ճամբուն վրայ՝ Լոնտոն և Մանչեսթըր:

Հ. Բ. Ը. Միութեան Ամերիկայի բոլոր ձեռնարկներուն մէջ իր դերը անուրանալի է և ինչպէս նաեւ մասնակցութիւնը բոլոր հայկական զանազան կազմակերպութիւններուն, որոնք յոյսի և յուսախաբութեան այդ օրերուն ամէն ճիգ կը գործադրէին ազգին ֆիզիքական և քաղաքական փրկութեան համար:

Ամերիկահայ գաղութիւն մեծ ու տիրական դերը այս բոլոր գործերուն մէջ նշանակելի էր և Վահան Քիւրքճեհանի այդ միջոցին Հ. Բ. Ը. Միութեան Ընդհ. Գարտաւարի և Վարիչ-Տնօրէնի հանգամանքով կատարած դերը բոլոր հայունպատ և հայկական կազմակերպութիւններու մէջ՝ անուրանալի է:

1939 ին Քիւրքճեհան, իր յառաջացեալ տարիքին պատճառով կը հրաժարէր Հ.Բ.Ը. Միութեան մէջ իր ունեցած պաշտօնէն: Իր գնահատելի ծառայութեանց համար, նոյն տարուան Համաժողովին մէջ նշանակուելով կեդր. Յանձնաժողովի «ցմահ Անդամ», յատկացնելով հանգստեան թոշակ մը:

Բարեգործականի Կեդրոնին Նիւ Եօրք փոխադրուելէն ետք, «Պատուակալ Սորհրդական» իրաւունքը ընծայուեցաւ իրեն իրաւամբ, իբրև նշան երախտագիտութեան, որուն արժանացած էր իր ջանքերով և ծառայութիւններով:

Այո գործօն ու շարժուն մարդը, որ մեր հաղուագիւտ մտաւորականներէն է, իբրև գործնական մարդ եղած է նաեւ գրչի մարդ 15 տարեկանէն սկսելով աշխատեցիլ Հայ Մամուլին, 1879 էն սկսեալ յոշուածներ գրելով Պալտոյ «Լրագր»ին և «Փունջ»ին,

«Մասիս»ին և «Արեւելք»ին, «Երկրագունդ»ին և Իզմիրի «Արեւլ. Մամուլ»ին, նաեւ Փարիզի «Բռնասէր»ին, Թիֆլիսի «Մշակ»ին, Մարսիլիոյ «Արմենիա»ին, Փեթերսպուրկի «Արաքս»ին, Պոսթոնի «Պայքար»ին և մանաւանդ «Հ. Կոչնակ»ին, որուն իբր յոշուածագիր և խմբագիր աշխատած է 1913-էն սկսեալ, Հ. Բ. Ը. Միութեան «Յուշարար»ին, որ խմբագրած է 1912—1916 և 1923—1939 տարիներուն:

Հաս պէտք է յիշել նաեւ 1889 ին, իբր Վարդանեան Վարժարանի հրատարակութիւն, «Մենտոր» կիսամեայ հանդէսը, իր մէկ դասագիրքը՝ «Պատմ. Արեւելեան Հին Ազգաց» (1892), «Կիլիկիա» հատորի Բ. մասը՝ տպուած Բեթերսպուրկ (1894), «Վահան Մամիկոնեան» (1917)՝ Նիւ Եօրք, «Հայկական Կիլիկիա»՝ տպուած Նիւ Եօրք (1919), «Ասպետ Լիպարիտ» վէպը՝ տպուած Նիւ Եօրք (1924), «Ազատ Դիտարան»՝ Նիւ Եօրք (1925), բացի նախապէս մեր յիշատակած Կիպրոսի մէջ իր հրատարակութիւններէն:

Ունի նաեւ անգլիերէն լեզուով «Հայկական Կիլիկիա» իր գործին թարգմանութիւնը, 1919 ին, Ս. Սահակի և Ս. Մեսրոպի վրայ գրութիւն մը 1934 ին, Քաջն Վարդանի վրայ գրութիւն մը՝ 1951 ին, Վարդանանց 1500 ամեակի առթիւ:

Իր անգլիերէն հրատարակութեանց գլխաւորագոյնը, որ 1958ին հրատարակուեցաւ «Հայոց Պատմութիւն»ն է, պատկառելի պատտերազարդ հատոր մը 526 էջերով, երկար աշխատութեան արդիւնք որ Հ. Բ. Ը. Միութեան կողմէ հրատարակուած է, և ուրախալի է որ կարճ ժամանակի մէջ սպառուելով՝ Բ. Կապարութեան արժանացաւ:

Ինչպէս կը տեսնուի, Վահան Քիւրքճեհան որ գրեթէ դարու մը կեանք ունեցած է՝ իրապէս նուիրուածի և ծառայութեան մարդը եղած է և իրեն շնորուած երկարատեւ կեանքը օգտակարապէս գործածած է, բեղմնաւոր և արդիւնաւոր գործունէութեամբ մը որ անշուշտ պատուով պիտի յիշատակուի մեր ժամանակակից պատմութեան մէջ:

# ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆԻ ԿԵԱՆՔԻՆ

Ամերիկայի Շրջան.— 300 նոր անդամներ.—

Անդամագրական արշաւը կը շարունակուի, որովհետեւ դադար չճանչցող գործ մըն է մեր Միութեան համար: Յունուար 1960էն ի վեր շուրջ 300 հոգի Միութեան անդամ արձանագրուած են, որոնց երկու երրորդը՝ այս տարուան առաջին ութը ամիսներու ընթացքին:

Տարեկան Անդամատուրք՝ 5 Տոլար.—

47րդ Պատգամաւորական ժողովին տուած որոշումին համաձայն 1962էն սկսեալ տարեկան անդամատուրքը 5 տոլար պիտի ըլլայ:

Կտակներ եւ նուիրատուութիւններ.—

- 1) Փիթըր և Էլիզապէթ Թորոսեան հիմնարկութեան 1000,00
  - 2) Տիգրան Սիրամարզի կտակէն 2689,82
  - 3) Հէնրի Թ. Տիրոյէմի կտակէն 300,00
  - 4) Հայկուհի Փոլատեանի կտակէն 290,86
  - 5) Յակոբ Թոփալեանի կտակէն 31,019,01
- Երախտագիտութեամբ կ'արձանագրենք

վեհոգի ազգայիններու սոյն նուիրատուութիւնները:

Դասախօսութիւն.—

Հ.Բ.Ը. Միութեան Նիւ Եորքի Մասնաճիւղը կազմակերպած էր շահեկան դասախօսութիւն մը Ապրիլ 19ի երեկոյեան, Յրիտիմ Հասուղի մէջ, որուն ներկայ եղաւ խուռն բաղմուտիւն մը:

Բիւզանդազէտ Տոքթ. Սիրարփի Տէր Ներսէսեան խօսեցաւ «Աղթամարի Եկեղեցիին Դանդակներ և Նկարներ» — նիւթին շուրջ: Ան եկեղեցիին կառուցման ամփոփ պատմականը ընկէ ինչպէս նաեւ մեր գրականութեան մէջ անոր արձագանգը նշելէ ետք (Յովհաննէս Թումանեանի Աղթամարը), մոզական լապտերով ցոյց տուաւ Դագիկ Թաքաւորին կանգնած կոթողին որմնադարերը: Անոնք կը ներկայացնեն Յիսուսի կեանքէն և կատարած հրաշքներէն պահեր և արարքներ, Հին Կտակարանէն խորհուրդներ և աշխարհիկ կեանքէն, բնութեանէն, կենդանիներէն և առօրեայ աշխատանքէն այլեւայլ տեսարաններ: Բացի ճարտարապետական քանդակագործական և նկարչական ացօժէքէն, սոյն որմնաքանդակ-

## ԱՂԹԱՄԱՐ (Հասուած)

Ո՞վ է ջահել էն խիզախը,  
Որ հենց հարբած իր սիրով,  
Սըրտից հանած ահն ու վախը  
Ծովն անցնում է գիշերով,

Ծովն անցնում է միւս ափերից  
Մեր Թամարին համբուրում...  
«Աղջի՞կ խըլի նա մեր ձեռից...»  
Ի՞նչի տեղ է մեզ դնում...»:

Էսպէս ասին վիրաւորուած  
Կըզզու միջի ջահելներ  
Ու Թամարի ձեռքով վառած  
Լոյսը հանգրքին մի գիշեր:

Մոլորուեցաւ խաւար ծովում  
Լուզորդ տղան սիրահար,  
Ու բերում է հողմը, բերում  
Հառաչանքներն՝ «Ա՛խ, Թամա՛ր...»:

Մօտ է ծայնը. խօլ խաւարում,  
Ժայռերի տակ սեպացած,  
Ուր ամեհի ծովն է գոռում,  
Մերթ կորչում է խլացած,  
Ու մերթ լսում ուժասպառ,  
«Ա՛խ, Թամա՛ր...»:

\* \* \*

Առաւօտեան ծովը ծրփաց,  
Ափը ձգեց մի դիակ,  
Նըրա շուրթին, պաղ, կարկամած,  
Ասես մեռած ժամանակ  
Սառել էին երկու բառ.  
«Ա՛խ, Թամա՛ր...»:

Այն օրուանից սըրա համար

Կըղզին կոչուեց Աղթամար:  
ՅՈՎՀ, ԹՈՒՄԱՆԵԱՆ



ները քաղաքի մը կողման այդ ժամանակուան մարդոց հագուստ-կապուստին ձևին և ճաշակին մասին: Իր դասախօսութիւնը եզրակացնելով, Օր. Տէր Ներսէսեան ըսաւ թէ «Աղթամարի Եկեղեցին ո՛չ միայն հայ, այլ քրիստոնէական եկեղեցիներու ճարտարապետութեան մէջ գոհար մըն է»: Օր. Տէր Ներսէսեանի գործերէն «Հայաստան և Բիւզանդական Կայսրութիւն»ը անգլերէն լեզուով, հրատարակուեցաւ 1947ին, Բարեգործականի օժանդակութեամբ և արժանացաւ Ա. և Բ. տպագրութեան, որոնք սպառած են:

Օր. Սիրարփի առաջին Հայ կինն է որ պարգևատրուած է Ամենայն Հայոց Հայրապետութեան Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջին Կարգի շքանշանով:

Միութեանս 55րդ օտարերկր Միացեալ Նահանգներու ամէն կողմը տօնակատարուեցաւ հրապարակային հանդէսներով: Այս առընչութեամբ եղան նաեւ ըզմաթիւ արձանագրութիւններ: Նոյնպէս մեր մասնաճիւղերը կազմակերպեցին աւանդական Մայրերու Օրուան հանդէսները և պարգևատրուեցան ըզմաթիւ օրինակելի մայրեր: Այս հանդիսութեանց հետ կը նշենք մասնաւոր դասախօսութեանց շարքը, որ կազմակերպուեցաւ Միութեանս Նիւ Ինկլիշտի Շրջ. Յանձնաժողովի նախաձեռնութեամբ և որուն առաջինը տեղի ունեցաւ Փետր. 2ին, Բարեգործականի սեփական Տան մէջ, Ուոթըրթաուն: Տօքթ. Յովնան Թաշճեան ներկայացուց օրուան դասախօսը՝ ճարտարագէտ Պր. Յոլլի Ամիրեանը, որուն նիւթն էր «Ակնարկ մը Հայոց պատմութեան վրայ»: Պր. Ամիրեան շատ խնամուած դասախօսութիւն մը ըրաւ և շատ մը գիրքերէ և քարտէսներէ մէջ բերուին ըրաւ, ցուցադրելով նաեւ բաւական թիւով հին հայկական դրամներ:

— Երկրորդ դասախօսական հաւաքոյթը տեղի ունեցաւ Մարտ 23ի երեկոյեան Միութեանս Կեդրոնին մէջ: Դասախօսութեանց յանձնախումբին նախագահ Տօքթ. Յովնան Թաշճեան ներկայացուց օրուան դասախօսը՝ Պր. Գրիգոր Նաճարեանը, որուն նիւթն էր «Լուսանկարչութիւնը իբրեւ արհեստ և գեղարուեստ»: Յարգելի դասա-

խօսը հետաքրքրական կերպով ներկայացուց լուսանկարչութիւնը իր այլազան ճիւղերով: Յիշեց մանաւանդ որ երկու հայեր Ամերիկայի և ամբողջ աշխարհի մէջ համբաւ հանած են իբրեւ Լուսանկարչութեան հանճարներ, ձան Կարօ և Սուսուֆ Բարչ:

— Դասախօսական երրորդ հաւաքոյթը տեղի ունեցաւ Ապրիլ 20ին նոյն վայրին մէջ: Օրուան դասախօսն էր Զօր. Սարգիս Զարդարեան, Հ.Բ.Ը. Միութեան Նիւ Ինկլիշտի Յանձնաժողովի ատենապետը: Զօր. Զարդարեանի դասախօսութեան նիւթն էր «Կտակ մը ունենալու կարեւորութիւնը»: Յարգելի բանախօսը կտակի մասին կարեւոր բացատրութիւններ տուաւ: Թուեց կտակի մը օրինական նկատուելու պայմանները: Այս հետաքրքրական դասախօսութիւնն ալ վերջ գտաւ ներկաներու ջերմ ծափերով յայտնուած գոհունակութեամբ:

Հարաւային Ամերիկա — Մոնթիվիդէօ.

Բանաստեղծ Կարպատ Բէմպէճեանի քերթուածներու հատորին լոյս տեսնելուն առթիւ Հ.Բ.Ը. Միութեան Մշակութային Յանձնախումբը սարքեց պատուոյ ճակատոյթ մը: Երեկոն վերածուեցաւ գեղարուեստական վայելքի մը: Բոլոր խօսողները գնահատանքով անդրադարձան բանաստեղծի արուեստին զանազան յանկանիչներու մասին: Բորեղործականի երգչախումբը երգեց բանաստեղծին երգի վերածուած մէկ կտորը:

— Մութէվիտէօյի Մասնաճիւղը մեծ շուքով տօնեց Միութեանս 55րդ տարեդարձը, գործադրելով ճիշտ յայտադիր մը: Օրուան բանախօսն էր «Պայքար» օրաթերթի խմբագիր Պր. Անդրանիկ Անդրէասեան, որուն խօսքերը մեծ հաճոյքով ունկնդրուեցան: Միութեան երգչախումբին գեղեցիկ երգերով և Հոգչ. Ներսէս Մ. Վրդ. Տոլապճեանի օրհնութեան խօսքով հաւաքոյթը փակուեցաւ: Հայրենակից մը 500 փետոնուրեց Երգչախումբի ֆոնտին:

Պուեկոս Այրէս.

Ապրիլ 16ին Կիրակի առաւօտ տեղի ունեցաւ մասնաճիւղի տարեկան ընդհանուր ժողովը և նոր Վարչութեան ընտրու-



Թիւնը խանդավառ մթնոլորտի մը մէջ: Շուրջ 100 անդամներ ներկայ գտնուեցան այս կարեւոր ժողովին: Կարգացուեցան շրջանաւարտ վարչութեան բարոյական և նիւթական գործուէնէութեան տեղեկագիրները: Իր ընդհանուր գիծերուն մէջ, վարչութեան միամեայ աշխատանքը արժանացաւ ներկաներու բարձր գնահատանքին, նկատի ունենալով որ այս շրջանին հաւաքատեղին կը դառնար Միութեան սեփականութիւնը, ինչպէս նաեւ նոր տարեշրջանին կը փոխանցուէր կարեւոր գումար մը, որ պիտի ծառայէր իբր հիմնադրամ, ծրագրային բարենորոգութեանց որ հաւաքատեղիին պիտի տար բոլորովին նոր դիմագիծ, զայն վերածելով մշակութային կեդրոնի մը, չափանա հայ երկսեռ երիտասարդութեան համար: Ապա տեղի ունեցաւ Վարչութեան ընտրութիւնը, ինչպէս և հաշուեքննիչին:

— Ապրիլ 22ի երեկոյեան Միութեան երիտասարդական լիկան կազմակերպած էր դասախօսութիւն մը: Գասախօսն էր Վոյճար» օրաթերթի խմբագիր Պր. Անդրանիկ Անդրէասեան, նիւթ ունենալով «Երիտասարդութիւն և ժողովուրդ»: Այս խիստ հետաքրքրական դասախօսութիւնը տեւեց լման ժամ մը, որուն ընթացքին բանախօսը ճշգրիտ վերլուծումը ըրաւ երիտասարդութեան ունեցած դերին ազգերու պատմութեան մէջ: Լրաւ նաեւ շահեկան թելադրութիւններ, նոր սերունդի անդամները ազգային իտէլաներով առաջնորդելու համար: Վարչութեան Ատենադպիրին շնորհակալութեան խօսքով փակուեցաւ հաւաքոյթը, որմէ ետք ներկաները հիւրասիրուեցան գրադարանի երկրորդ յարկին մէջ:

— Միութեան 55ամեակի տօնակատարութիւնը տեղի ունեցաւ Ապրիլ ամսոյ 30ի գիշերը, հո՞ծ բազմութեան մը ներկայութեան: Բանախօսեց «Պայքար» օրաթերթի խմբագիր Պր. Անդրանիկ Անդրէասեան, որ լայն բացատրութիւններ տուաւ Հ. Բ. Լ. Միութեան յիսնամեայ պատմութեան մասին: Գործադրուեցաւ գեղարուեստական յայտագիր մը, մասնակցութեամբ Երեւան Նուագախումբին: Շէնչող մթնոլորտի մէջ, հաւաքոյթը տեւեց մինչև ուշ գիշեր:

Անգլիա, Լոնտոն.—

Հ. Բ. Լ. Միութեան Լոնտոնի Մասնաճիւղին անդամական ժողովը գումարուելով ընտրած է նոր վարչութիւն մը որուն ղեւանը կազմուած է հետեւեալ կերպով.—

Տեարք՝ Ս. Բիւրքճեան	Ատենապետ
Ա. Սաչատուրեան	Փոխ-Ատենապետ
Ն. Չիլինկիրեան	Փոխ-Ատենապետ
Ա. Թօսուհեան	Գանձապետ
Ե. Նիկողոսեան	Ատենազպիր

Ծրացաւ.— Փարիզի Հ. Բ. Լ. Միութեան գրասենեակի սրահին մէջ, հայ թատրոնի մասին բանախօսութիւն մը ըրաւ Պ. Արտաշէս Գմբէթեան, Յունիս 7ի Զորքշարթի օրը, երիտասարդներու համար, որոնք խմբովին եկած էին զինքը լսելու: Պ. Գմբէթեան պատմականը ըրաւ Հայ թատրոնի, Հայոց Արտաւազդ թագաւորէն ի վեր: Ապա ծանրացաւ վերջին մէկ դարու ընթացքին արեւմտահայ և արեւելահայ թատրոնին ու այս շրջանին: ապրած նշանաւոր դերասաններու մասին, տալով մանաւանդ Պետրոս Ադամանի կեանքին և գործուէնէութեան մէկ լուսաւոր պատկերը:

— Յունիս 24ին, շաբաթ օր, նոյն սրահին մէջ բանախօսեց Տիար Գրիգոր Պահրի, նիւթ ունենալով Գրիգորեան եկեղեցիներու Միութեան խղումը: Այս շահեկան բանախօսութիւնը կազմակերպած էր Հ. Բ. Լ. Միութեան Փարիզի մասնաճիւղը, նախագահութեամբ Եւրոպայի Կաթ. Պատուիրակ Գեր. Տ. Սերովբէ Եպիս. Մանուկեանի: Ներկայ էր կոկիկ բազմութիւն մը: Մտա մէկ ու կէս ժամ տեւող խղամիտ ուսումնասիրութեամբ մը Տիար Պահրի հակիրճ պատմականը ըրաւ քրիստոնէական եկեղեցիին, և իր զանազան բաժանումներուն, արեւելքի և արեւմուտքի մէջ: Յիշեց առաջին երեք Տիեզերական ժողովները, որոնք գումարուեցան բոլոր եկեղեցիներու մասնակցութեամբ, թուեց նաեւ յետագայ ժողովները, որոնց չորրորդին— Գողկեդոն — չկրցաւ մասնակցիլ Հայաստանեայց եկեղեցին, ինչպէս և յաջորդները, որոնք հետզհետէ խորացուցին Հռոմէական և Օրթոտօքս եկեղեցիներու միջեւ սնջրպետը և որ վերջի վերջոյ յանգեցաւ խզումի:

Տիար Պահրի յետոյ յիշեց քրիստոնէական կրօնքին մէջ առաջ եկած հերձուածները և զանազան աղանդները, ժամանակագրական կարգով և իրենց յատկանիշերով, և ոգեկոչեց այժմ եկեղեցական Միութեան համար եղած ջանքերը և անոնց համար մողթեց յաջողութիւն, յիշեց նաեւ Տ.Տ. ՎԱԶԳԻՆ Կաթողիկոսի խօսքը թէ բոլոր եկեղեցիները պէտք է ապրին սիրոյ և խաղաղութեան մէջ, փոխադարձ յարգանքի և հանդուրժողութեան ոգիով: Հաւաքոյթը պահպանիչով մը փակեց նախագահ սրբազանը:

Բարեգործականը՝ Վիկենայի մէջ.—

Հ.Բ.Ը. Միութեան կանոնադրութիւնը տեղական իշխանութեանց կողմէ վաւերացուած ըլլալով, Ապրիլ 14ին տեղի ունեցած է մասնաճիւղային անդամական ժողովը, որ ընտրած է նոր վարչութիւնը ութը անդամներէ բաղկացած, ինչպէս նաեւ երկու հաշուակալներ: Նորընտիր Վարչութիւնը Ապրիլ 18ին իր անդրանիկ նիստը գումարելով ընտրած է իր ղեկանը:

— Ամենայն Հայոց Վեհ. Հայրապետ Տ.Տ. ՎԱԶԳԻՆ Ա. Կաթողիկոսը, որ Յուլիսի սկիզբը Կ. Պոլիս գացած էր նախագահելու համար հոգելոյս Գարեգին Պատրիարքի օժման և յուզարկաւորութեան հանդէսին, Էջմիածին վերադարձի ճամբուն վրայ հանդիպած է Վիկենա նոյն ամսոյ 26ին և 28ի Կիրակի օր տեղւոյն Հայոց մատրան մէջ մատուցած է Ա. Պատարագ: Այդ առթիւ Վիկենայի հայ գաղութի կողմէ Օփերայի ճաշարանին մէջ պատեոյ ճաշ մը տրուած է:

Վիկենա քննկութեան ընթացքին Վեհափառը այցելութիւն տուած է Աւստրիոյ Վարչագետին և Կրթական նախարարին, և ճաշի հրաւիրուած Միւթարեան Միաբանութեան կողմէ:

Վեհափառը Վիկենայէն մեկնած է Յուլիս 25ին:

Կիպրոս.—

Մեկզոնեան Կրթ. Հաստատութեան Մասնաճիւղի և Լուսնաքայի մասնաճիւղի կազմ

մակերպած Հ.Բ.Ը. Միութեան հիմնարկութեան 55ամեակի հանդիսութիւններէն ետք, Լիմասոլի հայ գաղութի մասնաճիւղն ալ տօնեց 14 Մայիսի Կիրակի օր Միութեան 55ամեայ տարեդարձը դպրոցի սրահին մէջ: Օրուան բանախօսն էր Մեկզոնեան Կրթ. Հաստատութեան տնօրէն Պ. Սաչեր Գալուստեան որ ուղերձով մը դժեց Բարեգործականի ընդհանուր պատկերը սկզբնական օրերէն մինչեւ մեր օրերը: Գործադրուեցաւ գեղարուեստական յայտագիր մը, որուն անմիջապէս յաջորդեց Բէրմէս-Պաղարը, զոր պատրաստած էին Մասնաճիւղի ժրջան անդամակները: Տեղի ունեցաւ վիճակահանութիւն:

Յուճասան.—

Հ.Բ.Ը. Միութեան Յունաստանի Կեդրոնական Մասնաժողովը իր պաշտօնավարութեան եռամեայ շրջանը աւարտած ըլլալով, Յուլիս 16ի Կիրակի օր գումարուած է ընդհանուր ժողով և ընտրուած է նոր մասնաժողովը հասեւեալ կազմով.—

Տետրք Վահէ Աղասեան, ատենապետ, Թագաւոր Տիւսիզեան՝ ատենադպիր, Եդուարդ Ալուրմաճեան՝ գանձապետ, Հրանդ Ճինէրճեան՝ Յակոբ Տամլամեան՝ Գարեգին Պաշտիկեան, Գրիգոր Պաղճեան՝ խորհրդակալներ:

Աթէնքի Հ.Բ.Ը. Միութեան Արթաքի Գալթագեան վարժարանի ամսվերջի հանդէսը տեղի ունեցաւ Յունիս 25ի Կիրակին: Մասնաժողովի ատենապետ Տիար Հրանդ Ճինէրճեան պարզեց վարժարանի համար եզած բարոյական և նիւթական զոհողութիւնները, և շեշտեց վարժարանի շէնքի մը զնուծի որոշումը բարեբար Տիար Արթագի Գալթագեանի նուիրատուութեամբ: Վարժարանի այս տարուան հունձքը եղած է՝ 12 նախակրթարան և 12 մանկապարտէզ: Ծրջանաւարտներէն 5ը պիտի ընդունուին Կիպրոսի Մեկզոնեան Կրթական Հաստատութեան մէջ:

Ամմանի Հ.Բ.Ը. Միութեան Կեանքի.—

Յուլիս 2ի Կիրակի առաւօտ հիմնաքարը զետեղուեցաւ Հ.Բ.Ը. Միութեան Վահրամ Իւզպաշեան վարժարանի, նախագա-

Ստորեւ կը հրատարակենք Միուրբեանս Գուրե-  
 եալ անդամներէն Տիար Արքիմ Պերն Յա-  
 կոբեանի հետեւեալ դասախօսութիւնը, որ  
 կատարեց Երեսասարգացի Հոկտեմբերի վե-  
 շին հաւաքոյթին, մեծ հետաքրքրութիւն ստեղ-  
 ծելով:

**ԱՄՐԴՈՒՍ ԾԱԳՈՒՄԸ ԸՍՏ ՏԱՐՎԻՆԻ**

Ա. Մուսօֆ

1959ի Սեպտեմբերի ընթացքին, Շի-  
 քաշոյի համալսարանին մէջ տեղի ունեցաւ  
 համագումար մը, որուն մասնակցեցան ա-  
 ւելի քան 4000 բնագէտներ, մարդաբաններ,  
 երկրաբաններ եայլն, որոնք եկած էին աշ-  
 խարհի ամէն կողմերէն: Այս համագումար  
 րը կոչուած էր տօնելու Անգլիացի հռչակա-  
 ւոր բնագէտ Չարլզ Տարվինի «Տեսակներու  
 Մազումը» (Origin of Species) գիրքին  
 հրատարակութեան հարիւրամեակը:

Տարվինի վերոյիշեալ գիրքին հրատա-  
 րակութիւնը ժամանակին մեծ աղմուկ յա-  
 րոյց, վասնզի ան կը բացատրէ մարդուս  
 ծագման մասին իր հիմնած տեսութիւնը,  
 զոր ազատեցանելու համար, փաստեր,  
 տուեալներ որոնց և լման երեսուն տարի  
 աշխատեցաւ այս ուղղութեամբ:

«Պիտի չկրնայի աշխատիլ և ապացու-  
 ցանել իմ գաղափարներուս ճշդութիւնը—  
 կը գրէ Տարվին—եթէ ձեռքիս տակ չունե-  
 նայի ինձմէ առաջ այս ուղղութեամբ գըր-  
 ւած գիրքերը»: Հետեւաբար, անհրաժեշտ է,  
 նախ քան Տարվին, մարդուս ծագման մա-

հութեամբ Ամենապատիւ Ս. Պատրիարք  
 Հօր: Նախ կատարուեցաւ հիմնարկէքի օրն-  
 ութիւնը, ձեռամբ Լուարսրապետ Գերշ.  
 Հայրիկ Եպիս.ի և Միաբան Հայրերու:  
 Սրբազան Պատրիարք Հայրը խօսեցաւ այս  
 բարեբաւտիկ առիթով, ապա հիմնաքարե-  
 րուն զետեղումը տեղի ունեցաւ Ն.Վ. Վար-  
 չապետին և Նախարարներուն կողմէ: Ամ-  
 մանի հայերը մեծ բազմութեամբ լեցու-  
 ցած էին հողամասը, որուն վրայ պիտի  
 կառուցուի նոր վարժարանը, և մեծ խան-  
 դավառութեամբ ընդունեցին Պետական  
 անձաւորութիւնները, որոնք առաջնոր-  
 դուեցան յատկապէս լարուած մեծ վրանին  
 տակ:

սին յայտնուած կարծիքներուն վերահասու  
 ըլլալ:

Նախ գիմենք Ս. Գիրքին, ուր կը  
 նշուի թէ Աստուած աշխարհի բոլոր կեն-  
 դանիները և բոյսերը ստեղծելէ ետք, վե-  
 ցերորդ օրը, ափ մը հող առաւ և անոր  
 շուշ տալով վերածեց մարդու և զայն  
 կոչեց Ադամ: Նոյն կերպով ստեղծուեցաւ  
 Եւան, իբր Ադամի կենակից:

Իրիստոնէութեան տարածուելէն ետք,  
 մարդուս ծագման մասին այս տեսութիւնը  
 ընդունուեցաւ որպէս անժխտելի իրակա-  
 նութիւն և աւելի քան 16 դարեր մնաց  
 անխախտ, և ամէն անոնք որ այս գաղա-  
 փարը կը ժխտէին, կը պատժուէին չարաչար  
 կերպով: Սակայն 15րդ և 16րդ դարերու  
 ընթացքին տեղի ունեցած աշխարհագրա-  
 կան կարեւոր գիւտերը և նոր աշխարհնե-  
 րու ծանօթութիւնը առիթ ընծայեցին որ  
 Եւրոպա փոխադրուին դեռ անծանօթ մնա-  
 ցած բոյսեր և կենդանիներ, որոնց ուսում-  
 նասիրութեանը լծուեցան ժամանակի  
 գիտնականները:

Լիննէ, շուէտացի հռչակաւոր բնագէտին  
 կը պատկանի կենդանիներու և բոյսերու իր  
 ծանօթ դասաւորումը, որ կը գործածուի  
 մինչև ցարգ, և այս դասաւորումին մէջն  
 է որ Լիննէ մարդը կենդանիներու աստի-  
 ճանին վրայ դրաւ, զայն կոչելով Homo  
 Sapiens (Նելացի Մարդ), Լիննէի ամենէն  
 կարեւոր յաջորդը կրնանք նկատել Գօնթ  
 տը Պիթոն, ֆրանսացի բնագէտը, որ 18րդ  
 դարու կիսուն հրատարակած է Բնական  
 Պատմութիւնը, որ կը բաղկանայ 35 հա-  
 տորներէ և կը նկատուի առաջին փորձը  
 կենդանիներու և բոյսերու նկարագրու-  
 թիւնը ընդհանրական գիրքի վերածելու  
 աւընչութեամբ: Պիլֆոնի յաջորդեց Շը-  
 վալիէ տը Լամարք, որ կը նկատուի բնա-  
 շըրջումի տեսութեան (Evolution) հայրը:  
 Լամարք անժխտելի կերպով հիմնաւորեց  
 բարեփոխումի մասին իր գաղափարները  
 և իր աշխատութիւնները շատ մեծ ազդե-  
 ցութիւն ունեցան Տարվինի շրջանի գիտ-  
 նականներուն վրայ:

Ինչպէս կը տեսնուի, 16րդ դարու ըս-  
 կըզբնաւորութեան, արդէն առաջին հիմնա-  
 քարերը դրուած էին մարդու ծագման

իրականութիւնը լուսաբանելու համար՝ Տարվին օգտուեցաւ անոնցմէ և հիմնեց իր հուշակաւոր տեսութիւնը։

Մովային երկարատեւ և ուսուսմասիրական ճամբորդութենէ մը վերջ, Չարլզ Տարվին յանգեցաւ այն եզրակացութեան թէ կենդանիները ծագում առած են աւելի նախնական կենդանիներէ և աստիճանաբար բարեփոխուելով յարմարած են իրենց միջավայրին և իրենց գոյութիւնը պահպանած։ Գոյատեւման այս պայքարին մէջ ամենէն լաւերն են որ յաջողած են ապրիլ։

1871ին Տարվին հրատարակեց Մարդուն Մագումը, Descent of Man գիրքը, ուր կը բացատրէ թէ մարդը ծագում առած է իրմէ աւելի նախնական կենդանիներէ, որոնք բարեփոխուելով տեղի տուած են մարդակալիկներու ծագումին, Ape-Man և հետեւաբար՝ մարդուն։

Տարվինի այս վարկածը անսպասելի խանդավառութիւն յառաջ բերաւ ժամանակի բոլոր գիտնականներուն մօտ, որոնք իրենց բոլոր ճիգերը լարեցին և մշտալար ու խնամեալ աշխատանքով ջանացին վճռական փաստերով ճշգրիտ կերպով բացատրել մարդկային ծագումին պարագաները։

Բ. — Վերջնական Տեսութիւն Մարդու Մագման մասին

Աւելի քան 70 միլիոն տարիներ առաջ, Ստնաւորները սկսան արտաբեռել աշխարհիս, փոխան սողուններուն, որոնք 130 միլիոն տարիներէ իվեր կ'իշխէին առանձինն։ Այս եղելութեան գլխաւոր պատճառը կը նկատուի Ստնաւորներու տաք արիւն ունենալը, որուն շնորհիւ անոնք կարողացան տոկալ կլիմայական փոփոխութեանց և յարմարիլ միջավայրի նոր պայմանները, նոյնիսկ իրենցմէ շատ աւելի հսկաները — Dinosaurs — (մինչև 30 մէթր հասակ ունեցողները օրինակ) չկրցան դիմադրաւել գոյատեւման պայքարին և անյայտ կորուսուեցան։ Ստնաւորները երեք ընտանիքներու կը բաժնուին որոնց իրարմէ տարբերութիւնը կը յիշեցնէ սողուններէ իրենց ծագման և բարեշրջումի պարագան։

1) Prototheria.— Այս կաթնատուները կամ ինչպէս ըսինք՝ ստնաւոր անասունները

ներկայիս միայն Աւստրալիոյ մէջ կ'ապրին տաք արիւն ունին սակայն հաւկիթ կ'ածեն, ցոյց տալով սողունական ազգակցութիւն։

2) Metatheria.— Ագեւագնները — քանկուրու — կը պատկանին այս ընտանիքին. ձագուկները իրենց մարմնոյն մէջ կը սկսին կազմուիլ, սակայն շուտ ծնելուն հետեւանքով կը մտնեն իրենց մօրը մարմինին մաս կազմող պարկին մէջ, մինչև որ ինքնաբաւ ըլլան։

3) Eutheria.— Արգանդի ծնունդները. ներկայիս աշխարհիս ամենէն կարեւոր կենսադանիները, ինչպէս առիւծ, կապիկ, վագր, մարդ եւ այլն այս դասակարգին կը պատկանին։ Այս դասակարգը կը բաժնուի ինը ընտանիքներու որոնց մէջ մարդը կը պատկանի գլխաւորներու Primate ընտանիքին իրեն հետ կը գտնուին կապիկները և մարդակալիկները։ Աւելի քան 50 միլիոն տարիներու ընթացքին ստնաւոր անասունները գոյացան. իսկ 20 միլիոն տարիներ առաջ է որ ծառերու վրայ ապրող հսկայ կապիկները սկսան բնաշրջուիլ մարդ դառնալու համար։ Այս կապիկները (Parapithecus) կ'ապրէին պտուղներ ուտելով և ծառէ ծառ ցատկելով։ Սակայն կլիմայական փոփոխութեանց, մանաւանդ յառաջացած պաղութեան կամ ցրտութեան հետեւանքով պտղաբեր ծառերը չորցան և կապիկները ստիպուեցան ղէպի անտառներուն ծայրամասերը երթալ ուտելիք փնտռելու և իրենց ձագուկները կերակրելու համար։ Բայց երբ այդ անտառներուն ծայրամասերը կը հասնին, առջեւնին կը գտնեն բաց գաշտ։ Առաջին կապիկները կ'իջնեն դաշտ և կը սկսին սնանիլ որդեր ուտելով և դաշտային բոյսեր քաղելով։ Որդերը քարերու տակէն հանելու համար պէտք էր առջեւի ոտքերով քարերը վերցնել և սողունը յափշտակել։ Կապիկին այս ճիգը եղաւ ձեռքի գործածութեան սկզբնաւորութիւնը։

Երբ ծառերուն վրայ կ'ապրէին, իրենց միակ թշնամին, օձը կրնային տեսնել և ինքնապաշտպանութեան դիմել։ Պարագան նոյնը չէր բաց գաշտերուն վրայ, վասնզի առիւծը կամ վագրը տեսնելու համար պարտաւոր էին հեռաւոր հորիզոնները զննե-

Նորերու բաժինը

**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ**

**ԵՒ ԻՐ ԲԱՐԻՔՆԵՐԸ**

Հնակարկատ Վարպետ Յակոբը ծանր հիւանդ էր. բժիշկը յոյսը կտրեց: Կինը արցունքները կը զսպէր, զաւկին ցաւ չպատճառելու համար: Աշոտիկ դըպրոցէն վերադարձին, հայրը չգտաւ... դրացիները լեցուած էին տուներ: Շատ լացաւ. մօրը փաթթուած մնաց երկար ատեն: Հօրը մահը շատ ազդեց իրեն. ալ առաջուան գուարթ տղան չէր: Մայրը կարի սկսաւ:

Լու, և վտանգի գէժ պաշտպանուելու համար. Հետեւաբար ստիպուեցան ուղիղ կեցուածք մը որգեզրել հեռուն աւելի գիւրաւ կարենալ զննելու համար: Ուղիղ կենալու և ձեռքերու գործածութեան ջանքերը այս կապիկներու մարմնակազմին մէջ տեղ տուին նորանոր բարելւումներու որոնք եկան յանգեցան նախամարդու կազմին:

Կլիմայական նոր փոփոխութիւններ յառաջ եկան և ծառերը զարձեռալ կրցան ապաստան դառնալ կապիկներու: Պաշտ իջնող կապիկներու Parapithecus տեսակը, որ ուղիղ կենալու և ձեռքերը գործածելու կարողութիւնը կրցած էր իւրացնել, բաժնուեցաւ երկու մասի: Մէկ խումբը վերադարձաւ դէպի իր նախկին միջավայրը և յետագային ծագում տուաւ չէմբազէներու, կորիլլաներու, և օրանկութանոներու, իսկ միւս խումբը դաշտէն չհեռացաւ և կամաց կամաց բարեփոխուելով յառաջ բերաւ նախամարդը և յետոյ մարդը իր զանազան խումբերով և տեսակներով: Ինչպէս կը տեսնուի մարդը ծագում առած չէ ո՛չ Շէմբազէն, ո՛չ ապա կորիլլայէն: Միակ կապը անոնց միջեւ նախահայրերու նոյնութիւնն է. իսկ մարդ արարածին ծնունդ տուող կապիկները ինչպէս ըսինք, արդէն 15 միլիոն տարիներէ ի վեր բաժնուած են իրենց ցեղակիցներէն:

ԱՐԹԻՆ ՊԵՐՃ ՅԱԿՈՅԱՆ  
Գսակաւոր Գիտութեանց  
(Գ հիւրէի Համալսարանէն)

Հ.Բ.Ը. Միութիւնը ստանձնեց հոգալ Աշոտին դպրոցական ծախքերը: Աշոտի վիճակը բարելաւուած էր հիմա: Այլեւս զլիսկոր չէր հարուստ ընկերներուն քով: Գրեթէ հաւասար էր անոնց:

Դպրոցին Կադանդի աւանդական հանդէսը տեղի ունեցաւ: Սաները բարերարներու նուիրած նուէրներով եւ պտուղներով տուն մեկնեցան՝ ուրախ եւ զրւարթ:

Տիկին Արաքսի տունը չէր: Աշոտ աւանձնութեան մէջ յիշեց իր ընկերը, Վարդանը: Արդեօք ինչպէ՞ս պիտի անցնէր իր Կադանդը, որուն համար այնքան խօսած էր դպրոցը:

Հօրը ողջութեանը, գոնէ աղքատիկ սեղան մը կ'ունենային: Երկու կաթիլ արցունք հոսեցաւ աչքերէն:

Հ.Բ.Ը. Միութեան զրասնեակը խումբ մը տիկիներ իրենց տարեկան պարտականութիւնը կատարելու համար հաւաքուած էին: Մէկը անուն մը աւելցուց ցանկին վրայ՝ Աշոտ Յակոբեան: Արդեօք ի՞նչ պատրաստած էին մեր որբուկին համար:

— Չէ՛, չէ՛, չեմ ուզեր, այդ ալ չեմ ուզեր, ո՛չ, այդ ալ:

— Տղաս նայէ՛ ինչ գեղեցիկ է այս ինքնաշարժը. արդեօք այս գեղակը կը փափաքի՞ս, թէ այս զգեստը:

Կողովին մէջ քանի մը նուէր մնացած էր եւ Աշոտիկ կը մերժէր:

Խեղճ նուիրատուները իրենք ալ չէին զիտեր ինչ ընելին:

Ի վերջոյ պատասխանելու համար իր վրայ տեղացող հարցումներուն, պատասխանեց.

— Հայրիկս կ'ուզեմ, հայրիկս. եւ յուզելով բոլորը կրկնեց.

— Այո՛, հայրիկս կ'ուզեմ, կ'աղաչեմ հայրիկս...

ԳՐԻԳՈՐ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԱՐԳԱՐԵԱՆ  
Յորեկանակաւ Առաջին մրցանակ  
(պատանիներ 15 տարեկանէն վար)



# Մ Գ Ի Ի Ռ Ի Բ Ա Հ Ա Յ

## Կ Ե Ա Ն Ի Բ Է Ն

Սան Ֆերնանտոյի հովիտին մէջ օրհնուեցան հիմերը եկեղեցիի մը, որ պիտի կառուցուի ի յիշատակ Հայ Նահատակացի Եկեղեցիին պիտի կառուցուի Հայաստանի Ս. Հռիփսիմէ եկեղեցւոյ տիպարով: Ծարտարապետն է Լօրէնս Գոնտրանեան: Հիմնարկութեան առթիւ ի մէջ այլոց խօսեցաւ բարերարուհին՝ Տիկին Սաթենիկ Տէր Օհանեան, յիշեց իր նահատակ քահանայ հայրը որ ուրիշներու հետ ողջ ողջ այրուեցաւ: Մայրը՝ քոյրն է վաղամեռիկ և հանճարեղ բանաստեղծ Միսաք Մեծարեւոյցի, որ աքսորուեցաւ իր 10 զաւակներուն հետ և ահհետ կորուսեցաւ: Նահատակաց եկեղեցիին հիմերուն վրայ ցանուեցաւ բուռ մը հող՝ Աւարայրի գաւառն և բաժակ մը ջուր Տըղմուտ գէտէն: Յանուեցաւ նաեւ բուռ մը հող Ս. Էջմիածնի Վանքէն, Գեղարդի պարտեզէն և Սոր Վիրապէն:

— Այս քաւի Նիւ Եօրքի մէջ լոյս տեսաւ Տօքթ. Հմայեակ Ստեփանեանի ջանքերով երջանկայիշատակ Յովհաննէս Նազլեան Գերապայծառի յուշերուն Ֆրանսերէն երկհատոր մեծածաւալ մատենին Առաջին հատորին հայերէն թարգմանութիւնը: Գործը կը բովանդակէ 700 մեծադիր էջեր, 25 նկատներ և քարտէս մը որ կը ներկայացնէ տարագիրներու անցած արիւննաներկ ճամբաները:

Ֆրեզնոյ եւ հայերը.—

Ամերիկեան ծայրագոյն Արեւմուտքի այս սիրուն քաղաքը, Ֆրեզնոյ, — իր անունն առած է հացեցի բառին սպաներէնէն:

Մեքսիկեան տիրապետութեան տակ գտնուած ժամանակ աննչան կէտ մը եղած ըլլալու է, ամայի և կիզիչ անապատային շրջանի մը մէջ, Բայց այսօր դարձած է բարգաւաճ կեդրոն մը՝ այգեգործութեան, պտղամշակութեան և թեթեւ ճարտարարուեստին: Իր բարեխառն կլիման, իր ընդարձակ հարթավայրերը, իր բարձրաբերձ լեռնաշղթային մերձաւորութիւնը, ամառանոցային հրապոյրներով, զայն ընդունակ

գարձուցած է առինքնելու՝ բազմութիւնները:

Ֆրեզնոյ ունի, այսօր, դրեթէ հարիւր-յիսուն հազար բնակիչներ, որոնց ոչ նուազ քառորդը հայերէ բաղկացած է:

Այս հայերը զբաղած են և կը գրադին երկրագործութեամբ, այգեմշակութեամբ, պտղամշակութեամբ և անհուն զոհողութիւններու գնով՝ անապատային Ֆրեզնոն փոխակերպած են ծաղկեալ քաղաքի, աշակցութեամբ ուրիշներու:

Հայերը տիրացած են արդէն նախանձելի վիճակի մը. արդարեւ ասոնց միջեւ կան բազմաթիւ միլիոնատէրներ: Ոմանք անշարժ կալուածներ ունին, ոմանք ալ նշանաւոր առեւտրականներ են:

Հայերը սկզբնապէս եկած են Սարբերդի դաշտէն, Տարօնի և Վասպուրականի գիւղերէն:

Գրիգոր Նարեկացիի Աղօթամատենը  
Ֆրանսերէն.—

Ուրախութեամբ կը տեղեկանանք, թէ Բարիզէն Պէյրութ զրկուած է առաջին նմոյշը Գրիգոր Նարեկացիի «Աղօթամատեն»ին ֆրանսերէն լիակատար թարգմանութեան, ձեռամբ Գեր. Հ. Սահակ վրդ. Քէչիշեանի, Յիսուսեան Միսաքութեան, տնօրէն՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ ձեմարանի, և յառաջարկեցով Գեր. Հ. Յովհ. վրդ. Մըսըրեանի, Սէն-ժոզէֆ Համալսարանի Հայագիտական Ամբիոնի վարիչին:

Առաջին հատորն է սա, որ կը բաղկանայ 552 էջերէ և զոր «Սերձ» Հրատարակչական Տունը, ի լոյս ընծայած է «Քրիստոսոսեան Աղբիւրներ» համբաւաւոր շարքին մէջ, (թիւ 78):

Այս առիթով հրատարակիչներուն կողմէ հետեւեալ ծանուցագիրը գեղեղուն է և «Հոգեւոր Կեանք» ֆրանսերէն հանդէսին մէջ, 1961ի Յուլիսին.—

«Այս աղօթամատենը մէկն է հայ հոգեւոր գրականութեան ամենէն երկնալիներէն:

Ընթերցողը թող շփոթահար չմնայ, ի տես՝ քնարական յորդ գեղումին՝ զոր պարզած է այս բանաստեղծը և սուրբը: Այս էջերուն մէջ ընթերցողը պիտի գտնէ ամենախոր հոգեկանութիւն մը, վաւերականօրէն քրիստոնեայ, որ ունի երկու յատ-

կանիչեր, մեղքին սայրասուր զգայնութիւնն ու մարդկային հասարակաց զօշը՝ մեղքին մէջ, և Յիսուսի Բրիստոսի հանդէպ ամենաջերմ սէրը:

Յառաջարանը և ներածութիւնը կը զետեղեն Նարեկացին և «Աղօթամատեան»ը՝ իրենց միջավայրին և նոյնիսկ հայ ժողովուրդին պատմութեան մէջ:

Հայր Բէչիչեան յաջողած է տալ մեզի՝ Ֆրանսերէն յստակ և հաճելի թարգմանութիւն մը, — նոյնիսկ չափաբերեալ — դժուարին բնագրի մը, զոր յաճախ «անթարգմանելի» որակած էին, բնագրին գրական ինքնատպուստեան պատճառով»:

Մառի Արմանեանի Հայաստանեան Յուսերու զեկոյցի երեկոն. —

Մարտ 25ին Փարիզի Ազգային Տան սրահներուն մէջ տեղի ունեցաւ բանաստեղծուհի Մառի Աթմանեանի զեկոյցի երեկոն՝ ընտրեալ ու բազմաթիւ ունկնդիրներու ներկայութեան:

Մասնաւորապէս մտաւորական ընտրանի մը՝ բաղկացած ուսուցիչներէ, լրագրողներէ և արուեստագէտներէ՝ աւելի քան ժամ մը տեւող բանախօսութեամբ զինքը լսեցին խանդավառ արամազրուութեամբ:

Բանախօսուհին՝ որ վերջերս Հայաստան հրաւիրուած էր Ս. Հայաստանի 40 ամեակի Յօրելիական հանդիսութեան մասնակցելու համար և որ եօթը շարաթներ տեւող իր այցը մեր երկրին առիթ տուած էր իրեն մօտէն ճանչնալու մեր հայրենիքը, կրցաւ իր նկարագրութեան շունչ ու ոգի տալ ու խօսիլ մշակութային, գրական, ընկերային հարցերու մասին ու նկարագրել արտակարգ վերելքը՝ որ կրցած է ունենալ Սովետական Հայաստանը, բաղդատաբար այսքան քիչ ժամանակի մը մէջ:

Բանաստեղծուհին որ այցելեր էր Էջմիածինը, Գեղարդը, Գառնին, Սեւանը, Օշականը, Սոր-Վիրապը, Բիւրականը, Արզնին, արդէնաբերական գործարաններ և մշակոյթի կեդրոններ՝ երկարօրէն խօսեցաւ Երեւանի հռչակաւոր Մատենադարանին և անոր պարունակած քանի մը հին գլուխ գործոցներուն վրայ, ինչպէս «Մշոյ ձառնատիր»ը, Անանիա Շիրակացիի աստեղագիտական տեսութեանց հատորի մասին, ինչ-

պէս նաեւ մեր մատենագիրներու ձեռքով կատարուած յունական բնագիրներու թարգմանչական էջերուն վրայ:

Սօսեցաւ գրականութեան և արուեստներու թանգարանին տուած իր բազմաթիւ այցելութեանց մասին, ուր բանաստեղծուհին բախտը ունեցեր էր տեսնելու Սայաթ Նովայի Տաճարը իր ձեռագիրով, Սաչատուր Աբովեանի «Վերք Հայաստանի»ի բնագիրը, Բազմիկի վէպերուն ձեռաստարերը, Գամառ Գաթիպայի, Ալ. Մատուրեանի, Շիրվանզատէի, Յովհ. Թումանեանի, Գաբրիէլ Սունդուկեանի, Լէօի, Յ. Յ. Պարոնեանի, Տիգրան Չուխաճեանի, Կոմիտաս Վարդապետի, Պ. Աղամեանի և դեռ տասնեակ մը արեւելահայ գրողներու վաւերագրերը:

Սօսեցաւ նաեւ Արշակ Չօպանեանի, Թորոս Աղատեանի, Ա. Սեմայի յատկացուած գրագրականերու մասին՝ որոնք արդէն սկսած են դասաւորել ու շուտով պիտի յանձնուին ուսումնասիրական աշխատանքներ կատարող մտաւորականներու և պատմագրագէտներու:

Տիկին Արմինէ Վարպետեան արտասանեց երկու անտիպ քերթուածներ Մառի Աթմանեանէ, դերասան Տրդատ Նշանեան և Պ. Ն. Պշտիկեան արտասանեցին Վարուժանէն և Աւ. Իսահակեանէն տպաւորիչ բանաստեղծութիւններ:

ԺԱՒԻ երիտասարդ արուեստագէտները նուագեցին և երգեցին նոր Հայաստանեան Ֆօլքօրիկ երգեր ու երեկոյթը վերջ գտաւ հայրենասիրական խանդավառ ծափերու մէջ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԳԱՒԷԺԸ. —

1926ին Սորհրդային Միութեան մէջ արուեստական ձգախէժի պատրաստութեան կապակցութեամբ միջազգային մրցում մը բացուեցաւ որուն աշխարհի բոլոր գիտնականներուն մասնակցութեան հրաւեր տրուեցաւ: Այս մրցման մէջ յաղթական հանդիսացաւ ռուս յայտնի գիտնական Լէպէտեւ, որ ձգախէժի արուեստական տեսակը պատրաստեց ալքօլ էթիլիքը իրեն հիմ ունենալով: Եւ 1932ին, Լէնինկրատի մէջ հիմը դրուեցաւ արուեստական ձգախէժի գործատան, իսկ ուրիշ մըն ալ որոշուեցաւ

հիմնել Երեւանի մէջ: Սակայն ակթօլէթի-  
լիքով ձգախէժ պատրաստելու դրութիւնը  
հայ գիտնականներուն կողմէ անշահ ձեռ-  
նարկ նկատուեցաւ, անոր համար որ 10-12  
թօն գետնախնձոր պէտք է սպառել, մէկ  
թօն ակթօլէթիլիք ստանալու համար...  
Անհրաժեշտ էր ուրեմն ուրիշ միջոցառում-  
ներով ստանալ նախանիւթը ասանաղին ըլ-  
լալու պայմանաւ: և մեր քիմիագէտները  
գործի լծուեցան մեծ թափով և յաջողեցան  
օգտագործել Հայաստանի կրաքարները —  
գալգէր — որոնց անսպառ պահեւտի պա-  
շարը սկսաւ արուեստական ձգախէժի հում  
նիւթ, նախանիւթ հանդիսանալ: Արդարեւ  
1935ին Կիրովի անուան Երեւանի մէջ հիմ-  
նուած գործարանը սկսաւ շահարկուիլ և  
հրապարակ նետուեցաւ արուեստական ձգա-  
խէժը որ հայ գիտական միտքին արտադրու-  
թիւնն էր: Հրապարակ ելած այս ձգախէժի  
տեսակը «Սեւան» կոչուեցաւ և սկսաւ օգ-  
տագործուիլ քիմիական ճարտարարուեստի,  
ելեքտրական լարերու — գապլօ —, ձգա-  
խէժէ զգեստներու և այս կարգի այլ ձեռ-  
նարկութեանց մէջ: Այս սկզբնական շըր-  
ջանին յաջորդեց շարքը բարեյաջող տարի-  
ներու, որոնք արձանագրեցին որակեալ,  
ընտիր և ասանագին ձգախէժներու տեսակ-  
ներ: Եւ ի պատիւ մեր գիտնականներու,  
պէտք է ըսել թէ անոնք ձեռնածալ չնստան,  
այլ յարատեւ ջանքերով յաջողեցան բար-  
ելաւել իրենց առաջին արտադրութիւնը՝  
«Սեւանը», և հրապարակ հանեցին նոր տե-  
սակ մը՝ «Նայիրեան» ձգախէժը, որ 1948-50

տարիներու ընթացքին պատրաստուեցաւ և  
որուն յաջորդեցին նոր տեսակներ եւս, ինչ-  
պէս Լ-4, Պ/ՍՍ և այլն: Յետագային ստաց-  
ուեցաւ նաև NT տեսակը, որ օգտագործուե-  
ցաւ որպէս մածոցիկ կօշիկի ճարտարար-  
ուեստի մէջ այնպէս որ այլևս արտասահմա-  
նէն կութարբերքա ներածելու կարիք չմնաց՝  
Այժմ ձեռնարկուած N և LN նորատե-  
սակ ձգախէժներու զանգուածային պատ-  
րաստութեան: Այս տեսակները շատ տոկոսն  
են և կը դիմանան իւղի և էսանսի ազդե-  
ցութեան և այս պատճառաւ կարելի պիտի  
ըլլայ զանոնք օգտագործել քարիւղի ինչպէս  
նաեւ ինքնաշարժերու, թրաքթէօներու և  
այլ համանման ճարտարարուեստական ձեռ-  
նարկներու մէջ: Երեւանի Իրովի անուան

### ԴԱԽԻԹԻ ԹՈՒՆԵՐԸ

Կը պարծենամ հայրենիքիս անցեալով,  
Նրանք լիքն են ինչպէս երկիրն Արարատ-  
եան,  
Դարեր վառուող յաղթանակի լոյս աստ-  
Անուաներով հերոսական: [ղերով,

Կը պարծենամ յաղթ աղեղովն իմ նախահօր,  
Սուրբ անունով հայոց Հայկի տիրտանական,  
Որ պսակուած է, հանց Մասիսն այս ալեւոր,  
Փառքի թագով յաւերժական:

Կը պարծենամ հայոց հոգւոյ լոյս գանձերով,  
Մատնաններով մագաղաթեայ աղօթ քնիւրի,  
Յաւիտեան նոր երգի Գողթան հին քնարով,  
Անմահ ու սուրբ զուսանների:

Կը պարծենամ Դաւթի թրով կայծակնեղէն,  
Որ շառաչեց դաւերի դէմ տէրունական,  
Որ մէջք տուեց, դարձաւ երկրիս վէմ ա-  
Եւ պիտ' շողայ հուրն յաւիտեան: [պաւէն,

Կը պարծենամ ե՛ւ թռուներով Դաւթի ան-  
մահ,  
Որ ձիերն են այսօր սանձում հուր հողմերի,  
Որոնց ամէն ոտնահետքը երկրի վրայ  
Գերեզման է ոսոխների:

Եւ ես ցմահ, կը պարծենամ երկրէ երկիր,  
Իմ ժողովո՛ւրդ, քո անունով ե՛ւ վեճ ու հեզ,  
Թող քանդակեն այս ինձ իրրեւ տապանա-  
Կը պարծենամ, որ, Հայ եմ ես: [գիր,  
ՅՍՎՀԱՆՆԵՒ ՇԻՐԱԶ

գործարանը այս տարի կը տօնէ իր 25,  
ամեակը: Իր անունը ծանօթ է Հայաստանի  
սահմաններէն դուրս, շատ մը երկիրներու  
մէջ: Արուեստական ձգախէժի այս ձեռնա-  
րկութեան հեռանկարները շատ ընդարձակ  
են. գործատունը արդէն բնական կազ ու-  
նենալով, կ'օգտագործէ: Շուտով պիտի ձեռ-  
նարկուի բնական կազով ասանագին Ասէ-  
թիլէնի արտադրութեան յատուկ սարքա-  
ւորումներու զեւեղման, որով ձգախէժի ար-  
տադրութեան մէջ այս ասանագին սսէթի-  
լէնի օգտագործումով կարելի պիտի ըլլայ  
ո՛չ միայն մեծ խնայողութիւններ իրակա-  
նացնել. այլ և հայկական արեւեստական  
ձգախէժը դարձնել Սորհրդային Միութեան  
ամենատեւագին արտագրութիւնը:

Ֆրանսա. Փարիզ. —

Ամերիկահայ երգահան Ալան Յովհաննէս որ շրջապտոյտի ելած է եւրոպական կարգ մը երկիրներ, 29 Ապրիլին, Փարիզի Սալ-Կալոյի սրահին մէջ իր գործերէն մէկ քանին ներկայացուց երաժշտասէր սահաւաթիւ բայց ընտրեալ հասարակութեան մը ներկայութեան Ալան Յովհաննէսի գործերուն մէջ երկու ուղղութիւն կարելի է բնորոշել՝ նախ ինքը սիրահար է արեւելեան երաժշտութեան, զոր մշակած է իր բազմաթիւ գործերուն մէջ։ Մշակած է նաեւ արդիական երաժշտութեան միւլտիք թունքէն կոչուածը և պատրաստած է հեղինակութիւն մը սէնֆոնի անուան տակ, որուն ունկնդրութիւնը տեղի ունեցաւ նուագահանդէսի ընթացքին և որ արժանացաւ ջերմ ծափերու։

— Ֆրանսահայ անուանի գերասաներգիչ Շարլ Ազնաւոր, ընդառաջելով ֆրանսական Սովետական մշակութային ընկերակցութեան հրաւերին մեկնած է Ս. Միութիւն և պիտի այցելէ նաեւ Հայաստանի մայրաքաղաքը՝ Երեւան։

Տիրան Կառվարեց.—

Ճոնի Հալիտէյ երգիչ-ղերասանը յայտարարեց՝ թէ այսուհետեւ պիտի երգէ միայն Տիրան Կառվարենցի յորինած՝ առօք-էնտոնոլլները։ Լուրը հրատարակուած է ֆրանսական «Օրոր» թերթին մէջ, Հոկտ. 16ին։

Տիրան Կառվարենց բարեկան է բարիզահայ նշանաւոր երգիչ-ղերասան Շարլ Ազնաւորի, որուն քրոջ — Այտայի — հետ պիտի ամուսնանայ շուտով, ըստ նոյն թերթին։

Երիտասարդ արուեստագէտը, որ դաւակն է հանգուցեալ բանաստեղծ Գէորգ Կառվարենցի, յաջողութիւն գտաւ նախ յորինելով երաժշտութիւն «Ինքնաշարժ մը՝ Թոպրուքի համար» պատկերախաղին, ապա յորինելով երաժշտութիւնը «Առիւծները արձակուած են» պատկերախաղին, զոր բեմադրած էր Հանրի Վեռնոյ (Աշոտ Մաղաքեան)։

Տիրան Կառվարենց յորինած է նաեւ «Ժամադրութիւն մը ի Պրազիլիա» պատկերախաղին երաժշտութիւնը, որ մեծ ընդունելութիւն գտաւ նոր մայրաքաղաքին բացման օրն իսկ։

Իթալիա. —

Հոռոմի Լեւոնեան հայ կղերանոցի փոխ-մեծաւոր Գեր. Գրիգոր Վարդապետ Պետրոսեան, յոյժ շահեկան գասախօսութիւն մը ըրած է ի ներկայութեան հայ, լեհ և իտալացի ընտրանի բազմութեան մը, նիւթ ունենալով Հայերու մասնակցութիւնը ու արժանիքը Լեւոնեանի դիւանագիտական պատմութեան մէջ։ Գերայարգելի վարդապետը հեղինակութիւն մըն է Լեւոնեանի Հոյոց Պատմութեան համար և պատրաստած է Լեւոնեանի Հայոց Պատմութիւնը, երեք հատորնոց խնամուած գործ մը, որուն առաջին հատորը լոյս տեսած է 1950ին և սպասած, Իսկ անտիպ հատորները ի մօտոյ տպագրութեան պիտի յանձնուին։

Լիբանան.—

Նահատակ գրագէտ Մելքոն Կիւրճեանի (Հրանդ) զաւակը՝ Եսէն Կիւրճեան, որ վերջերս իր մանկանացուն կնքեց Պէյրութին մէջ, Հայաստան զրկած է իր հօր շարք մը անտիպ գրութիւնները, որպէսզի յանձնուին Աբեղեանի անուան գրական Ինստիտուտին, ուր արդէն յանձնուած են և ի պահ դրուած Սաչատուր Աբովեանի Կեանքն ու Գործը — (ուսումնասիրութիւն) և (Վէրք Հայաստանի) — արեւմտահայերէնի վերածուած ամբողջական ձեռագիրները, ժամացոյցը և թղթապնակը։ Նոր զրկուած նիւթերն են։

- 1) Ռընանի «Յիսուսի Կեանքը (Թարգմանութիւն) անտիպ։
- 2) «Անցած Դէմքեր», վերյիշումներ իր ուսուցիչներէն 1905ին։
- 3) Կորիւն, Փարպեցի և Սորենացի (ուսումնասիրութիւն)։
- 4) Պատմութիւն Անգլիական գրականութեան։
- 5) Գրաբարի ուսուցման գասագիրք մը։
- 6) Գրիգոր Օտեանի անտիպ նամակները՝ ուղղուած Երուանդ Օտեանի։

— Պէյրութի Հայ Աւետարանական Գուլէճի Շրջանաւարտից Միութեան հովանաւորութեամբ, Մարտ 12-23ին տեղի ունեցած է Հայ Մամուլի ցուցահանդէս մը։

Յուզահանդէսի բացումը կատարուած է Երեքշաբթի՝ Մարտ 21, Հայ Աւետարանական Եկեղեցւոյ հանդիսարանին մէջ։ Այս առթիւ դասախօսութիւն մը տեղի ունեցած է Հայ Մամուլի պատմութեան շուրջ։ Յուզահանգէսը կ'ընդգրկէ հայ առաջին թերթէն մինչեւ հիմա լոյս տեսնող թերթերը 1794-1961։ Յուզադրութեան առարկայեղած են օրաթերթեր, պարբերաթերթեր, ամսագրեր եւն։

**Անդր-Յորդանան — Երուսաղեմ.—**

Սեպտեմբեր 26ին և 27ին Երուսաղէմի Ալ-Համրա սրահին մէջ «Անդրանիկ Երզնախումբ»ը տուաւ իր առաջին երգահանդէսը, ճոխ յայտագրով, Երզնախումբը լաւ մարտնչուած էր, կը բաղկանար 80 հոգիէ, որոնց 7 նուագողներ, 37ը երգիչներ և մնացեալը՝ պարողներ։ Պումբը հիմնուած է 1945ին, և քանի մը տարի առաջ ալ Հայաստանի խումբին հետեւողութեամբ Երգի և Պարի Անսանպի վերածուած։ Պումբը կ'առաջադէտայցելել մերձակայ արաբական երկիրները, Յունաստան, Թուրքիա և Ամերիկա։ Իր ելոյթիէն վերջ, խումբը Ամման մեկնեցաւ։

**Ա. Գուրգենեան Երուսաղեմի մեջ.—**

Կիրակի՝ 8 Հոկտ., Հ. Մ. Ը. Մ. ի Երուսաղէմին ահուճմին մէջ Իրանահայ արուեստագէտ Արրահամ Գուրգէնեան մագական լապտերով ցուցադրեց հայ արուեստի սքանչելիքները, որոնք թէեւ ամբողջութիւն մը չէին, բայց 100ի մօտ նմոյշներով ոգեւորեցին մեր հայրենակիցները, որոնք երկար ժամանակէ իվեր զրկուած էին այսպիսի վայելքներէ։ Ներկաները հետաքրքրութեամբ հետեւեցան ներկայացումին, որուն մասնաւոր բացատրութիւն մը կ'ընկերանար։

**Թուրքիա — Հայերը Սվազի մեջ.—**

Ներկայիս Սվազ քաղաքին մէջ ապրող հայերու թիւը մօտ 250 հոգի է։ Անոնք կը զբաղին ոսկերչութեամբ, սափրիչութեամբ և երկաթագործութեամբ։ Կան նաեւ դերօձակներ, դարբիններ, ժամագործներ և քանի մը առեւտրականներ։ Անվթար կը մնայ Ս. Նշան եկեղեցին որ վերածուած է

**ՀԱՅՐԵՆԻ ԱՇԽԱՐՀ**

— Ականաւոր լեզուարուն Հրահայ Աճառեանի ծննդեան 88 ամեակի առիթով, Ալ. Միսնիկեանի անուան պետական գրադարանին մէջ ցուցահանդէս մը կազմակերպուած է, ուր ներկայացուած են գիտնական լեզուարանին հայագիտական բազմաթիւ աշխատութիւնները որոնք լոյս տեսած են Հայաստանի ղանազան հրատարակչականներու կողմէ։

— Գրագէտ Նայիրի Զարեան Սովետական Միութեան Գերագոյն սովետի նախագահութեան հրամանագրով պարգևատրուեցու Աշխատանքային Կարմիր Դրօշի շքանշանով իր ծննդեան վաթսուամեակի կապակցութեամբ և սովետական գրականութեան զարգացման մարզին մէջ իր մատուցած ծառայութեանց համար։

— Կարեւոր գանձ մը յայտնաբերուեցաւ Մեղրիի մէջ, հին տան մը փլուտակներուն տակ, 18 քիլօ կշռող երկու հազար արծաթեայ դրամներու կոյտը մը, որ ըստ Երեւանի թանգարանի գրամագիտական բաժնի վարիչին, պատմական մեծ արժէք ներկայացնող դրամներու հազուագիւտ հաւաքածոյ մըն է։

**Գրիգոր Զօհրապի յիշատակը Երեւանի մեջ.—**

Հայֆիլհարմոնիայի դահլիճը լի էր, Յուլիո 28ի երեկոյին, զրոյներով, գիտուններով, արուեստագէտներով, մայրաքաղաքի բնակչութեան ղանազան խաւերու ներկայացուցիչներով։ Տեղի պիտի ունենար, Գրիգոր Զօհրապի ծննդեան հարիւրամեակին առթիւ, յարեկինական հանդէսը։ Ինքին վե-

մթերանոցի Հայերը ամփոփուած են մէկ թաղի մէջ և խառն ամուսնութիւններ չունին։ Բոլորն ալ հայախօս են։ Զուրկ են զպրօցէ. զայն վերաբանալու համար իրենց բոլոր ճիգերը ցարդ ապարդիւն մնացած են։ Նորընտիր Սրբազան պատրիարք հայրը հարկաւ կը հետաքրքրուի հեռաւոր Սվազի իր զաւակներուն հոգեւոր և մտաւոր վիճակով։



րեւ զետեղուած էր ականաւոր գրողին մեծադիր դիմանկարը, թարմ ծաղիկներով և կանաչութեամբ շրջանակուած :

Ներկայ էր Հայաստանի Հանրապետութեան Նախագահը Շ. Առուշանեան՝ իր հետեւորդներով :

Բացման խօսքն արտասանեց Նայիրի Զարեան. — Գրիգոր Զօհրայ ամենամեծ իրապաշտ գրողն է՝ արեւմտահայ գրականութեան մէջ : Տաղանդաւոր իրաւաբան, փայլուն հռետոր, մեծահամբաւ հանրային գործիչ, թրքական խորհրդարանի երեսփոխան, Գրիգոր Զօհրայ իր կարողութիւնը ամենաշքեղ կերպով յայտնեց գրչին միջոցով : Ան մարդկային պատիւն ու առաքինութիւնները գտաւ աշխատաւոր, պարզ մարգերու մէջ, իսկ շահագործող դասուն պատկանողները իր գրչին տակ երեւցան իրենց էութեան ամբողջ ապականութեամբ : Գործնական կեանքին իբրեւ իրաւաբան, գրականութեան մէջ՝ իբրեւ արուեստագէտ՝ Գրիգոր Զօհրայ տիտանական ոյժով պաշտպանեց պարզ, աշխատաւոր մարգերու գատը, ճիւղային մակարոյձներուն ղէմ :

Գրիգոր Զօհրայի վիպակներով (նորավիպակներով՝ ինչպէս որակեցին զանոնք երբեմն), կրնայ պարծենալ մշակոյթի տէր որեւէ ազգի : Հայ ազգը ժառանգորգն է մեծ գրողին գրչի արտագրութեանց :

Յաջորդաբար խօսեցան նաեւ բանասէր Մ. Հիւսեան, գրողներ Սողոմոն Տարօնցի, Ս. Ալաջալեան, Ս. Կուրտիկեան, Վ. Դաւթեան : Յորելիական հանգէսը փակուեցաւ ճոխ համերգով մը :

— Երեւանի մէջ քոցուած է օփերայի և դասական երաժշտութեան 1961-60 տարեշրջանի եղանակը : Աւաջին համերգը՝ հայ և եւրոպացի երգահաններու համանուագներով տրուած է հայֆիլարմոնիայի դահլիճին մէջ, պետական համանուագախումբին կողմէ՝ Օհան Տուրեանի ղեկավարութեամբ :

— Հայաստանի վիրաբոյժները Մոսկուայէն ստացած են արուեստական սիրտեր, որոնք պիտի գործածուին սիրտի բարդ գործողութեանց ընթացքին :

— Ընթացիկ տարւոյս ընթացքին Երեւ-

### ԱՍՏՂԱԳԷՏ ՎԻԿՏՈՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՍԵԱՆԻՆ

Դեռ այդքան բողբոջ, այդքան պատանի՝  
ինչէ՞ս հասկացար աստղերի լեզուն,  
Որ խորհրդաւոր գիրքը երկնքի  
Կարդում ես, որպէս քո հայոց լեզուն :

Ու միտք եմ անում որտե՞ղ հայ չկայ,  
Թող երկնքումն էլ մի հայ աստղ լինի. —  
Որ աշխարհ բերի գաղտնիքը նրա,  
Որ հայ անունն էլ աստղերին հասնի :

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ

(«Քնար Հայաստանի»)

ւանի մէջ շահագործման յանձնուած է հետեւստատեսային նոր հաղորդիչը, որ նախկինէն տասն անգամ աւելի հզօր է, ու կարելի կը դառնայ հաղորդումները հասցնել ոչ միայն Հայաստանի ծայրամասերը այլ և Կովկասի հեռաւոր շրջանները :

Հայ ստահի գիճիճերը —

Հայաստանի գիճիճերն ու ոգելից ըմպելիները լայնօրէն ճանաչուած են ո՛չ միայն Ուրիւթեան մէջ, այլեւ անոր սահմաններէն դուրս : Հայկական «Մուսկոտ»ը ոսկի մետաղներու արժանացաւ Եսեկոսլաւիոյ մէջ՝ 1955ին և 1957ին, Հունգարիոյ մէջ՝ 1958ին : «Արեւշատ», «Գետաչէն», «Օշական», «Աշտարակ», անա՛ յանկուցիչ անունները միւս գիճիճերուն՝ որոնք արժանացած են ոսկի մետաղներու՝ թէ՛ Ուրիւթեան և թէ՛ արտասահմանեան երկիրներու մէջ :

«Դուին», «Արմենիա», «Տօնական» «Յոբելեանկան», անա՛ ոգելից ըմպելիները, որոնք նմանապէս շահած են ոսկի մետաղներ՝ ամենուրեք :

Պրիւքսի վերջին ցուցահանդէսին մէջ Հայաստանի գիճիճերն ու ոգելից ըմպելիները մեծապէս գնահատուեցան և արժանացան ոսկի մետաղներու :

Մոսկուական Հանրապետութեան մայրաքաղաքին մէջ՝ ի մօտոյ տեղի պիտի ունենայ միջազգային ցուցահանդէս մը, որուն պիտի մասնակցի նաեւ Հայաստան : Այժմէն ղրկուած են հետեւեալ գիճիճերը. — «Արեւշատ» «Աշտարակ», «Արգելատ», «Մուսկոտ», «Ոսկեվագ», «Էջմիածին», «Օշական» :


Ակադեմիկոս Համբարձումեան ծնած է Թիֆլիսի մէջ, 1908 Սեպտեմբեր 18 ին: Զաւակն է Փրոֆ. Համազասպ Համբարձումեանի, որ յունարէն բնագրէն աշխարհաբարի թարգմանած է Հոմերոսի «Ոդիսականն» և «Իլիական»ը և ներկայիս, 81 տարեկան խոր աշխատիքին, նուիրուած է լատին գրողներու գործերուն թարգմանութեանց:

Վ. Համբարձումեան փոքր տարիքին արտակարգ հետաքրքրութիւն ցոյց տուած է թուարանութեան և գիտութեանց հանդէպ: 1921ին, Թիֆլիսի միջնակարգ վարժարանը աւարտելէ ետք, մտած է Լենինկրատի համալսարանը իր քրոջ Գոհարիկին հետ: 1931ին՝ դասախօս նոյն համալսարանին մէջ և գիտական աշխատող՝ անոր աստեղագիտարանէն ներս: 1935ին՝ առաջին դասախօս տեսական աստղագիտութեան և քիչ անց՝ վարիչ նոյն համալսարանի Աստղաբնագիտութեան ամպիոնին: 1941-43ին՝ տեսուչ Ելաբուգա (Թաթարիստան) համալսարանի: 1913ին՝ Իսկական Անդամ Հայաստանի Գիտութեանց Ակադեմիայի և 1943-47 ին՝ Փոխ-Նախագահ: 1944-ին՝ Երևանի Համալսարանի Աստղաբնագիտութեան ամպիոնի վարիչ և անօրէն Բիւրականի աստղագիտարանին: 1947-ին՝ Նախագահ Հայաստանի Գիտութեանց Ակադեմիայի: 1953ին՝ Իսկական Անդամ Խորհր. Միութեան Ակադեմիային:


Ակադեմիկոս Համբարձումեան մասնակցած և զեկուցած է Աստղագիտական Համաշխարհային Միութեան վերջին 5 համագումարներուն: Ան Պաթուոյ Անդամ է Անգլիոյ, Ֆրանսայի, Աւստրիոյ Իտալիոյ, Միացեալ Նահանգներու և այլ երկիրներու Աստղագիտական Ընկերութիւններու և Արուեստի ու Գիտութեանց Ակադեմիաներու: Պարգևատրուած է վեց եօթը անգամ Սանթա Պարպըրայի և Պըրքիի մէջ գումարտող Համաշխարհային Աստղագիտական Միութեան 11րդ Համագումարը միաձայնութեամբ Նախագահ ընտրեց հայ տիեզերագէտը, իրբնէ յաջորդը հոլանտացի գիտնական Տոքթ Իան Օրթի: Եաջորդ ժողովը պիտի գումարուի Համպուրկի մէջ, 1964 ին:

Այս Համագումարին՝ ան կը զլխաւորէր Խորհրդ. Միութեան 45 հոգիոց պատուիրակութիւնը, որոնցմէ 7 հոգի Հայաստանէն կուգային. Համբարձումեանին կ'ընկերանար

ԳՐԱՐԵԳՈՐԾԱԿԱԿԱՆԻ ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԷՆ



ԱՐԹԻՆ ՊԵՐՃ ՅԱԿՈՐԵԱՆ  
իր յողուածը կարդալ էջ 14ի վրայ



ԳՐԻԴՈՐ Թ. ՄԱՐԳԱՐԵԱՆ  
իր Ա. մրցանակի արժանացած վիպակը տես էջ 16

իր տիկինը, Վերա, և փայլուն աշակերտն ու գործակիցը՝ Տոքթ. Բենիամին Մարգարեան, որ եղբայրն է հայրենի քերթողուհիներէն Մարո Մարգարեանի:

Տէր և Տիկին Վիկտոր և Վերա Համբարձումեան ունին չորս զաւակներ, Գայէն, Լեզուշ, Ռաֆայէլ և Ռուբէն, ինչպէս նաեւ թոռնիկ մը:

### ԳՍՀԻՐԷԻ Լ. Բ. Ը ՄԻՈՒԹԵԱՆ ՅՈՐԵԼԻՆԱԿԱՆ ՅՈՒՆԱՄԵԱՅ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ

Գահիրէի Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան հիմնադրութեան յիսնամեակին առթիւ կազմակերպուած հանդէսը մեծ շուքով տեղի ունեցաւ Կիրակի, 17 Դեկտեմբեր 1961ին, Նայլ Հոլ սրահին մէջ նախագահութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Տէր Մամբրէ Ս. Արք. Միտուհեանի և Հայ Աւետարանական Ժողովական Եկեղեցւոյ հովիւ Վերապատուելի Վահան Թութիկեանի ներկայ էին Արժանապատիւ Տէր Պետրոս Հայր Ֆէրէճեան, բարեջան նախադանը Յորեմիական Յաննախումբի, Առաջնորդական փոխանորդ Տէր Սահակ Աւագ Քահանայ Շաքարեան, ինչպէս և ազգային երեսփոխաններ և մշակոյթի գործիչներ:

Հաւաքոյթը բացուեցաւ Հանրապետական Քայլերգով (Գահնակ՝ Պր. Տիգրան Տաքէսեանի): Բեմը գեղեցկօրէն զարդարուած էր. կեդրոնը զետեղուած էր մեր կորովի նախագահ Կամալ Ապաէլ Նասրի մեծադիր նկարը, շրջապատուած գոյնզգոյն տանիքներէ և շինանածաղիկներէ կազմուած Յ ծաղկեկողովներով, որոնք զրկելու ազնիւ և վայելուչ դադափարը ունեցած էր Գահիրէի Վարչութեան նուիրեալ անդամներէն Տիար Մարտիկ Թաթիկեան: Մշտադաւար տունկեր կ'ամբողջացնէին բեմին յարդարանքը:

Քայլերգի ունկնդրութենէ վերջ, առաջին անգամ բեմ եկաւ Միութեանս երիտասարդաց Մշակութային մարմինի խանդավառ անդամներէն և Համալսարանի Գիտութեանց հիւղի ուսանողներէն Պր. Պերճ Մարտիրոսեան, որ յստակ առողանութեամբ և ճշգրիտ շնչտերով կարդաց Միութեան Ընդհանուր նախագահին ներշնչող պատգամը, որ ամփոփ մէկ պատկերացումն էր Բարեգործականի կեանքին և ուղեգիծը այն աշխատանքին, զոր իւրաքանչիւր Բարեգործականի անդամ պարտաւոր է կատարելու Սփիւռքի մեր իրականութեան մէջ: Պր. Մարտիրոսեանի շատ գնահատուած ընթերցումէն յետոյ հաճոյքն ունեցանք ունկնդրելու Օրիորդ Շուշան Քիւլանճեանը, որ

զգացումով և Բարեգործականի անդամուհիի մը վայել գիտակցութեամբ արտասանեց Միութեանս նուիրուած «Լուսացնցող Աստուղ»-ին (Ք. Շահնազար) գեղեցիկ քերթուած: Օրիորդը խանդավառ ծափեր խլեց իր այս գեղեցիկ արտասանութեամբ:

Մեծատաղանգ Երաժշտագէտ Ն. Տիգրանեանի Ռանքի և Կլոր Պարի քնքոյշ կտորը մեզի հրամցուց ծանօթ դաշնակահարուհի Օր. Հ. Պալճեան, շնորհալի արուեստով Ապախօսք առաւ Բարեգործականի անձնուէր պաշտօնեաներէն Տիար Վարդէս Գարտաշեան որ շուրջ կէս ժամ խօսեցաւ, պատկերացնելով Միութեան Գործը թիւերով և թուանշաններով: Այս թիւերը պերճախօս պատասխաններ էին մեր հզօր Միութեան ամէն կարգի հակառակորդներուն, որոնք կամաւոր կօյրեր ձեւացած, կ'ուրանան այս հանրօգուտ մեծ կազմակերպութեան կիսադարեան աշխատանքը: Յայտագրին առաջին մասը վերջ գտաւ Օրիորդ Սօնա Գաղթացեանի զոյժ մեներդովը: Օրիորդը զգացումով երգեց «Կ'անձրեւէ Տղաս» «Արդեօք Գիտե՞ս Դու» քնարական կտորները և հայ երգին հրապոյրովը գինովցուց մեզ: Օրիորդին դաշնակով կ'ընկերանար Տիկին Նատիա Գուլնուհեանը, որ յաճախ իր թանկագին օժանդակութեան բաժինը կը բերէ Բարեգործականի ձեռնարկներուն, իսկ Օրիորդ Գաղթացեան առաջին անգամն է որ կը պատուէ մեր բեմը իր ներկայութեամբ և պատուաբեր մասնակցութեամբ: Կը յուսանք այսուհետեւ իր ներկայութիւնը յաճախ վայելել և իր մշակուած ձայնին և քաղցր երգին հրայրքէն չզրկուիլ:

Յայտագրին Բ. մասը սկսաւ ասմունքի տաղանդաւոր վարպետ Պր. Օննիկ Գալուստեանի «Թմկաբերդի Առումը» (Յովհաննէս Թումանեան), երկարաշունչ քերթուածին արտասանութեամբ, զոր անյազօրէն ըմբոյշանեցինք և խանդավառօրէն ծափահարեցինք:

Օրուան բանախօսն էր Վերապատուելի Վահան Թութիկեան, երիտասարդ հոգեւոր հովիւը Հայ Աւետարանական Ժողովական Եկեղեցիին. Վերապատուելի Թութիկեան խօսեցաւ շուրջ կէս ժամ և պերճախօս ճառովը բացատրեց Բարեգործականի կարեւորութիւնը և օգտակարութիւնը: մեր հանրային կեանքէն ներս և զայն նմանցուց գիւ-

ղի մը մէկ ծայրը գետեղուած ջրամբարի մը, որ դաշտերուն, այգիներուն և պարտէզներուն կենսական ջուրը կը բաշխէ, նոյնպէս ալ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը, այդ ջրամբարին նման կենսատու միջոցներ կը ջամբէ ծերերու, անկեալներու, ալիւոր մտաւորականներու, մարդասէր և կրթասէր երիտասարդներու, կ'օժանդակէ հիւանդանոցներու դպրոցներու մարզարաններու և հետեւաբար հրաւիրեց ներկաները որ առանց այլեւայլի բոլորուին այս մեծ Միութեան շուրջը, օգնեն անոր, որպէսզի ան ալ իր կարգին, զրահուած գիտակից ժողովուրդին վստահութեամբն ու օժանդակութեամբը, քաջութեամբ դիմագրաւէ մեր տարահալած ժողովուրդին բաղձազան և այլազան կարիքներուն: Վերութիւնեան որ ամէն Կիրակի իր շինիչ,

իմաստալից և հայաշունչ քարոզներովը կը մխիթարէ իր հօտը, իր այս սքանչելի բանախօսութեամբը մեծապէս գնահատուեցաւ վարձատրուեցաւ խանդավառ ծափերով:

Արամ Սաչատրեանի «Բռէմը» նուագեց երիտասարդ դաշնակահար Պր. Տիգրան Տաքէսեան: Մեծ արուեստագէտին այս զեղեցիկ ստեղծագործութիւնը հմտութեամբ մեկնաբանուեցաւ մեր սիրելի Տիգրանին կողմէ և արժանացաւ ջերմագին ծափերու:

Կարգը եկաւ մեր բեմերու սիրուած և փնտռուած դէմքին՝ Պր. Միքայէլ Գարանֆիլեանի որ իր ուժեղ և քաղցր ձայնովը մեզի հրամցուց Սաթեանի «Ամպեր ինձնից Բարեւ Տարէք»ը և Ալվազեանի «Քարավանը» որ երկնուեցաւ Պր. Գարանֆիլեան իր զոյգ երգերով մեծ խանդավառութիւն սփռեց, արամագրութիւնները անգամ մը եւս

## Վ Ե Թ Ե Ր Ա Ն Ա Ն Դ Ա Մ Ն Ե Ր

### Գ Ա Հ Ի Ր Է Ի Զ . Բ . Ը . Մ Ի Ո Ւ Թ Ե Ա Ն

#### 1940—1960

Անանեան Էմբան  
Աբարցեան Սրուանդ  
Արթինեան Տիկ. Էլիզ  
Աւագեան Վահրամ  
Աւետիս ձորն  
Ափախեան Տիկ. Գոհար  
Գաղազեան Թուրքեց  
Գալեմբարեան Վահրամ  
Գալեմբարեան ձօն  
Գասարեան Օննիկ  
Գրվրեան Յակոբ  
Գործեան Տիգրան  
Գրիգորեան Մանուկ  
Դաւիթեան Գարեգին  
Ծագուպեան Տիկ. Նուարդ  
Ծաղրեան Արթ  
Էթմեհեան Մակարոս  
Էլեհեան Անդրանիկ  
Թարիբեան Հրաչ  
Թորիկեան Հրաչեայ  
Թումանեան Կիրակոս  
Ժամկոչեան Հայկ  
Ժամկոչեան Օննիկ  
Իօխանեան Տիկ. Լոռա  
Խանարեան Նուպար  
Կոկանեան Արմենակ

Ճաննիկեան Գրիգոր  
Մազլըմեան Բօլ  
Մանուկեան Վահրամ  
Մասղաբեան Զարեհ  
Մեսալեան Խաչիկ  
Մխալեան Տիկ. Աբալոյս  
Յակոբեան Նուպար  
Շախարեան Օր. Սեղա (յես մահու)  
Պալեան Սարգիս  
Պասիկեան Բիւզանդ  
Պողոսեան Ալպէր  
Սանսալեան Տիկ. Իսկուհի  
Սարաֆեան Սողուարդ  
Սարաֆեան Յակոբ  
Սարաֆեան Սարգիս  
Սվազլեան Տրդատ  
Սուքիասեան Նուպար  
Տեռ.Սեմփանեան Յակոբ  
Տերվիբեան Պերն  
Տոլագեան Քերիմ  
Իճիսեան Խաչատուր  
Քեօբեան Տիկ. Վիքորիա  
Քեօբեան Յովհաննէս  
Քիլիսեան Բօլ  
Ուղուրեան Գանիկ  
Սիմոնօ Սրուանդ

բարձրացուց և վարձատրուեցաւ բուռն և երկարատեւ ծափերով. իր դաշնակի ընկերակիցն էր Պր. Տաքէսեան :

Յիսուն երկու վեթերան անդամներու վկայականներու և յոբելինական շքանշաններու բաշխումէն յետոյ, Գերապատիւ Առաջնորդ Սրբազան Հայրը խօսք առնելով պանծացուց մանաւանդ Բարեգործականի Կրթական առաքելութիւնը, թուեց այն տիպար վարժարանները որոնց հանդիպած է Մերձաւոր Արեւելքի զանազան ոստաններու մէջ, և վերջացուց իր խօսքը անդամագորութեան հրաւէր կարդալով ներկայ հանդիսականներուն, և Տէրունական Աղօթքով

փակեց այս շատ գեղեցիկ հանդէսը: Յաւալի է որ Վեթերան անդամներէն շուրջ 40 հոգի կը բացակայէին, հակառակ որ անոնց իւրաքանչիւրք մասնաւոր հրաւեր ստացած երօրուան հանդիսութեան մասին: Վարչութիւնը նախապէս մեծ հանդիսավայրի մը մէջ այս հանդիսութիւնը կազմակերպելու համար ջանք չխնայեց. « Ճուճհուրիէ » սրահը կարելի չեղաւ մեր ժողովուրդին յարմար ժամերուն վարձել, իսկ Ամերիկեան Համալսարանի ընդարձակ սրահի մասին մեր դիմումին յապաղած պատասխանը ժխտական եղաւ դժբաղդաբար:

Ս.Շ.



Այս հրատարակութիւնը վճարովի չէ  
Շնորհակալութեամբ կ'ընդունինք նուէրներ, մեր այս  
ձեռնարկը աւելի ճոխ եւ օտանկան ընծայելու համար:  
— Ասանալու համար դիմել խմբագրութեանս —